

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ծրագրի գիտական ղեկավար՝

տ.գ.դ., դոցենտ Ա.Վ. Մաթևոսյան

Կատարողներ՝

տ. գ. թ., դոցենտ Վ.Գ. Բաղդասարյան

տ. գ. թ. Մ.Հ Մաթևոսյան

Դ/003

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2012–2013 ԹԹ. ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն

2014

ՀՏԴ 338
ԳՄԴ 65.05
Մ 151

**Երաշխավորվել է հրատարակության
ՀՊՏՀ գիտական խորհրդի կողմից**

Մաթևոսյան Ա.Վ.

Մ 151

**Փոքր և միջին բիզնեսի հարկային պլանավորման հիմնախնդիրները/ Ծրագրի
գիտական ղեկավար՝ Ա.Վ. Մաթևոսյան; Կատարողներ՝ Վ.Գ. Բաղդասարյան,
Մ.Հ. Մաթևոսյան .- Եր.: Տնտեսագետ հրատարակչություն, 2014.-114 էջ:**

ՀՏԴ 338
ԳՄԴ 65.05

ISBN 978-9939-61-072-6

© Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«Տնտեսագետ» հրատարակչություն, 2014

Ներածություն

Կազմակերպության հարկազանձման մեխանիզմի կառուցման տեսական և մեթոդաբանական հիմնախնդիրներին նվիրվել են մեծ թվով գիտական, գիտահետազոտական աշխատանքներ: Հիմնական ուղղվածությունը, սակայն, հարկային օրենսդրությանն առնչվող հիմնահարցերի ուսումնասիրությունն է: Ուստի արդիական են հարկազանձման ռեժիմի փոփոխության վերաբերյալ կազմակերպության հնարավոր վարքագծի կանխատեսման, ինչպես նաև տարածաշրջանային հարկային մարմինների հետ փոխգործակցության դեպքում՝ ծախսերի կրճատման մեթոդների մշակման, հարկային պլանավորման խնդիրները:

Միկրոմակարդակում հարկային պլանավորման հիմնախնդրի հրատապությունը պայմանավորված է ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակությամբ: Յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ ձգտում է նվազագույնի հասցնել ծախսերը և առավելագույնի՝ եկամուտները, ինչը հարկային վճարումների տեսանկյունից ևս բացառություն չէ:

Հարկային պլանավորումը գործունեության ոլորտ է, որ կարող է թեթևացնել կազմակերպության ընթացիկ և հեռանկարային գործունեության վրա արտաքին միջավայրի ազդեցությունը, ապահովել հավասարակշռություն հարկերի ֆիսկալ և կարգավորող գործառույթների միջև՝ այդպիսով նպաստելով հարկային համակարգի խթանող դերի մեծացմանը: Ընդհանուր առմամբ, հարկային պլանավորմամբ պետք է ստեղծվի արտադրության արդյունավետության վերահսկման ամբողջական համակարգ, ձեռնարկատիրական գործունեության առողջ մրցակցություն՝ հնարավորության սահմաններում նվազեցնելով ներդրումային ռիսկերը:

Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունն ուղեկցվում է բազմաթիվ ֆինանսական

ռիսկերով, որոնց կառավարումը համարվում է ֆինանսական վիճակի կայունության ապահովման և բարելավման կարևոր գործոն: Ֆինանսական ռիսկերի շարքում առանձնանում են հարկային ռիսկերը, քանի որ հարկազանձմանն են առնչվում կազմակերպության ֆինանսական գործունեության բոլոր ոլորտները: Հարկային ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը որոշվում է ինչպես հարկային վճարումների մեծությամբ՝ որպես ծախսեր, այնպես էլ պայմանավորված է դրամական միջոցների արտահոսքով, ՀՀ արտադրական կազմակերպությունների հարկային բեռի բարձր մակարդակով:

Ներկայացվող հետազոտությունում դիտարկվել են հարկային պլանավորման, հարկային բեռի գնահատման, հարկային ռիսկերի բացահայտման հարցերը, մշակվել են հարկային միջանցքի որոշման և շահույթի հարկազանձման մեխանիզմի պայմաններում վարկի լրահատկացման մոտեցումներ, որոնք կարող են կիրառվել մագիստրոսական ուսուցման շրջանակներում՝ «Հարկային պլանավորումը միկրոմակարդակում» դասընթացի համատեքստում:

1. ՀԱՐԿԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1.1. Արտադրական կազմակերպություններում հարկային պլանավորման էությունը և մշակման փուլերը

Միկրոմակարդակում հարկային պլանավորման անհրաժեշտությունը կապված է հարկային օրենսդրության հետ, որը նախատեսում է տարբեր իրավիճակների համար որոշակի հարկային ռեժիմներ, թույլատրում է հարկային բազայի հաշվարկման տարբեր մեթոդների կիրառում և նախատեսում է հարկատուների տարաբնույթ հարկային արտոնություններ, եթե դրանք ցանկալի են պետական մարմիններին: Միաժամանակ, հարկային պլանավորումը պայմանավորված է տնտեսության մի շարք ճյուղեր խթանելու, սոցիալ-տնտեսական զարգացման կարգավորման նպատակով պետությանը հարկային արտոնություններ տրամադրելու շահագրգռությամբ:


Հարկային պլանավորումը, ըստ Ե. Եստիգնեևի, հարկերը շրջանցելու՝ օրենքով տրվող արտոնությունների և հարկային պարտավորությունները կրճատելու հնարքների օրինական ձև է: Դրա էությունն արտացոլվում է հարկատուի կողմից օրենքով թույլատրելի բոլոր միջոցների կիրառմամբ հարկային պարտավորություններն առավելագույն չափով կրճատելու մեջ:

Հարկային պլանավորման խնդիրը նվազագույն ծախսերով առավելագույն ֆինանսական արդյունքի ձեռքբերման հարկազանձման համակարգի կազմակերպումն է: Հարկային պլանավորումն առավել արդյունավետ է բիզնեսի կազմակերպման սկզբնական փուլում, երբ պետք է խելամիտ ձևով կատարել կազմակերպարկական ձևի ընտրությունը, գրանցման տեղի, կազմակերպական կառուցվածքի մշակումը:

Հարկային պլանավորումը դիտարկվում է նաև որպես ֆինանսական մենեջմենթի հիմնական գործառնություններից մեկը: Այսպես՝ տարբեր ծախսերը ցանկացած բիզնեսի նախապայման են, միաժամանակ, առևտրային կազմակերպությունների հիմնական նպատակը շահույթի ստացումն է: Հենց ակնկալվող շահույթը և հետզնման ժամկետն են հանդիսանում բիզնեսում որոշակի ծախսերի կատարման նպատակահարմարության չափանիշ: Հարկային ծախսերը նպատակաուղղված չեն շահույթի ստացմանն ըստ բնորոշման, քանի որ դրանք կազմակերպության միջոցների մի մասի գանձումն են պետության օգտին՝ վերջինիս կողմից միակողմանի հաստատված կանոններով:

Չնայած հարկային պլանավորումը բավական տարածված հասկացություն է, սակայն դրա վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ ձևավորված միասնական տեսակետ չկա:

Հարկային կառավարման շրջանակները նշվածն իրագործելու առումով սահմանափակ են, ուստի դա հնարավոր է իրականացնել միայն ֆինանսական պլանավորման և ֆինանսական կառավարման միջոցով: Մեր կարծիքով, հարկային պլանավորումը հարկային կառավարման համակարգում կարող է բնութագրվել թիվ 1.1.1. գծապատկերի տեսքով:



Գծապատկեր 1.1.1. Հարկային պլանավորումը հարկային կառավարման համակարգում

Անհրաժեշտ է շեշտադրել նաև «հարկային խորհրդատվություն» հասկացությունը: Հարկային պլանավորումը, որպես հարկային կառավարման բաղակացուցիչ, հնարավորություն է ընձեռում հարկվող բազայի և հարկադրույքների տարբերության, օրենքով սահմանված հարկային արտոնությունների և համանման գործոնների օգտագործման միջոցով, որոնք կախված չեն կազմակերպությունից և հաստատվում են պետության կողմից, նվազեցնելու բյուջե վճարումների բացարձակ ցուցանիշը: Որպես արդյունք, հարկային պլանավորումը մեծ մասամբ կողմնորոշված է դեպի կազմակերպության ներքին միջավայրը: Ըստ էության, ընդհանրապես չի քննարկվում վճարումների կառավարման հնարավորություններին առնչվող հարցը: Միաժամանակ, հարկային վճարումները հնարավոր է վերահսկել ապրանքային անվանացանկի փոփոխման և ներքին պահուստների առավել արդյունավետ օգտագործման ճանապարհով: Հենց այդ նպատակին է ծառայում «հարկային խորհրդատվությունը»:

Կարծում ենք՝ հարկային պլանավորումը պլանային, տնտեսական ու իրավական տեսանկյունից հիմնավորված՝ ինչպես կազմակերպության հարկային վճարների բացարձակ մեծությանը, այնպես էլ հարկային բեռի նվազեցմանը ծառայող գործընթաց է:

Մասնագիտական գրականության մեջ տարբերակվում են հարկային պլանավորման երկու սկզբունքային մեթոդներ՝

- երկրի ներսում հարկային պլանավորում,
- երկրի սահմաններից դուրս հարկային պլանավորում:

Նման բաժանումը հենվում է հարկային միջավայրի և հարկային ռիսկերի վրա: Երկրի ներսում հարկային միջավայրը և հարկային ռիսկերը բոլոր հարկատուների համար գրեթե նույնն են: Ուստի որոշումների ընդունման դեպքում գործարարները, առաջին հերթին, ուղղորդվում են տնտեսական և քաղաքական նկատառումներով: Միջազգային հարկային պլանավորումը հիմնվում է երկրների միջև հարկազանձման՝ գոյություն ունեցող տարբերությունների վրա:

Ըստ ձևի՝ հարկային պլանավորումը լինում է կորպորատիվ (կազմակերպությունների համար) և անհատական (ֆիզիկական անձանց) համար: Նշված սուբյեկտների համար օրենքով նախա-

տեսված հարկային վճարումները շրջանցելու հնարավորությունները կարելի է որոշել.

- հարկման օբյեկտի յուրահատկությամբ,
- հարկման սուբյեկտի յուրահատկությամբ,
- հարկման մեթոդի առանձնահատկություններով,
- հարկազանձման համակարգի ձևով,
- «հարկային թաքստոցների» օգտագործմամբ, քանի որ առանձին երկրների հարկային ռեժիմներում գոյություն ունեցող տարբերությունները կարող են նվազեցնել հարկային բեռը կամ, ընդհանրապես, ապահովել հարկումից խուսափում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործնականում էական նշանակություն է տրվում հարկային վճարումների նվազեցման երեք հիմնական մեխանիզմների՝

- հարկային վճարումներից շեղում՝ tax evasion,
- հարկերի շրջանցում՝ tax avoidance,
- հարկային պլանավորում՝ tax planning:

Այդ մեխանիզմների համեմատական վերլուծությունը տրված է թիվ 1.1.1. աղյուսակում: Ներկայացված երեք մեխանիզմներն էլ օգտագործվում են հարկատուների կողմից, հենց ներկայացված հաջորդականությամբ են բնութագրում բիզնեսի և պետության միջև փոխհարաբերությունների զարգացման, ըստ էության՝ դրանց միջև շահավետ փոխհամաձայնության հաստատման էվոլյուցիան:

Հարկային պլանավորման կիրառման փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր մեթոդները, մեխանիզմները, մոտեցումները և միջոցներն օգտագործվում են հիմնականում համալիր ձևով՝ սերտորեն փոխկապակցված: Մաքուր ձևով դրանց կիրառումը հնարավոր է միայն առանձին գործառնություններում:

Աղյուսակ 1.1.1

Հարկային վճարումների նվազեցման մեխանիզմների համեմատական բնութագիրը

Համեմատման չափանիշներ	Հարկային վճարումներից շեղում (tax evasion)	Հարկերի շրջանցում (tax avoidance)	Հարկային պլանավորում (tax planning)
Հաջող կիրառման դեպքում սուբյեկտի տնտեսական նպատակահարմարություն	Առավելագույն	Միջին կամ նվազագույն	Միջին
Ռիսկի մակարդակ	Առավելագույն	Միջին	Նվազագույն
Անձնակազմի՝ պահանջվող որակավորում	Չի պահանջում հատուկ որակավորում	Հատուկ կամ բարձր	Բարձր
Պետության կողմից հնարավոր պատժամիջոցներ	Ընդհուպ՝ քրեական հետապնդում	Որպես կանոն՝ հարկային կամ վարչական	Առավելապես՝ հարկային
Պետությանը և հասարակությանը հասցվող վնասներ	Առավելագույն	Նվազագույն	Նվազագույնից՝ առավելագույն
Առավել օգտագործում	Անհատ ձեռնարկատերեր, փոքր բիզնես	Փոքր, միջին և խոշոր բիզնես	Խոշոր բիզնես
Պետության տնտեսական քաղաքականությունից կախվածություն	Հաստատվում են տնտեսական, քաղաքական, շուկայական իրադրության տատանումները	Հաստատվում են հարկազանձման ոլորտում տատանումները	Թույլ են տնտեսական, քաղաքական և շուկայական իրադրության տատանումները
Հարկային վճարումների այլ մեխանիզմների հետ համեմատում	Առավելապես կիրառվում է ինքնուրույն	Կարող է համատեղվել հարկային վճարումներից շեղման հետ	Կարող է համատեղվել հարկային վճարումներից շեղման կամ շրջանցման հետ

Հարկային վճարումներից շեղումը, մեր կարծիքով, հարկային վճարումների նվազեցման ձև է, որը կրում է անօրինական բնույթ, և դրա օգտագործման դեպքում կարող են կիրառվել քրեական պատասխանատվության միջոցներ, քանի որ մտածված ձևով խախտվում է օրենքը: Հարկային վճարումներից շեղման մեխա-

նիզմի կիրառման սուբյեկտիվ պատճառներն ունեն հոգեբանական բնույթ. հարկադրույքների չհիմնավորված բարձրացում, հարկային արտոնությունների կրճատում, հարկային բարձր բեռ, հանցագործության դեպքում՝ անպատժելիության հավատ, կյանքի դժվար պայմաններ, հովանավորչություն: Օբյեկտիվ պատճառները տեխնիկական և տնտեսական բնույթի են: Հարկային վճարումներից շեղման դեպքում բնութագրական են.

- հարկման օբյեկտների վերաբերյալ տեղեկատվություն թաքցնելը,
- հարկատուի դերում գրանցվելուց հրաժարվելը,
- հարկային հաշվետվությունների և հաշվառման փաստաթղթերի կեղծումը,
- աշխատողների թվի վերաբերյալ տեղեկատվության կեղծումը,
- օրենսդրական ակտերով սահմանվող արտոնությունների անօրինական օգտագործումը,
- հաշմանդամների վերաբերյալ տվյալների կեղծումը,
- հարկային վճարումների համար առկա դրամական միջոցները թաքցնելու նպատակով փոխկապված «բարեկամ» կազմակերպությունների հաշիվների օգտագործումը,
- պետության կողմից հարկազանձման անարդարացի մոտիվացիան քաղաքական նպատակներով:

Այդպիսով՝ կարող ենք փաստել, որ հարկային վճարումներից շեղման մեխանիզմի առանձնահատուկ գծերից են տվյալ գործառնության քրեածին բնույթը և ի սկզբանե հակասությունը գործող օրենսդրությանը: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ հարկատուի գործողությունների վերագրման որոշ չափանիշներ առկա են քրեական օրենսդրությունում: Օրինակ՝ իրավախախտման բնույթը և վնասի չափը: Միաժամանակ նշենք, որ «Հարկային խարդախություններ» հասկացությունը ՀՀ օրենսդրությամբ տրված չէ, օգտագործվում է «հարկերը վճարելուց չարամտորեն խուսափել» հասկացությունը, որը կարող է կիրառվել հաշվետվություններում կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերում խեղաթյուրված, կեղծ տվյալներ մտցնելու, այսինքն՝ խարդախության կամ պարզապես հաշվետվություններ չներկայացնելու միջոցով: ՀՀ հարկային համակարգում գործում են հետաքննության և

քննչական բաժիններ (օպերատիվ-հետախուզության վարչություն, ստուգող այլ ստորաբաժանումներ), որոնք քննում են համապատասխան գործերը, իրենց գործառնությունների իրականացման ընթացքում՝ հայտնաբերում խուսափելու դեպքերը: Հարկերից և հարկերի վճարումից խուսափելու չափն ու հնարավորությունը նվազեցնելուն նպաստում են այդ խախտումների հայտնաբերումը և պատշաճ քննությունը: Սակայն, մեր կարծիքով, կատարելագործման կարիք կա, մասնավորապես՝ հաշվետվություններն ընդունելիս խուսափելու հատկանիշներ հայտնաբերելու դեպքում արագ արձագանքելու առումով: Հարկերից և հարկերի վճարումից խուսափելու չափն ու հնարավորությունը նվազեցնելուն կօգնի նաև կանխարգելումը, որի ուղղությամբ կարևոր քայլ կհամարվի հետաքննության բաժնում վերլուծական խմբի ստեղծումը:

Հարկերը շրջանցելու մեխանիզմի օգտագործման դեպքում, ի տարբերություն վերը քննարկվածի, ընդունվում է հարկերը վճարելու փաստը, սակայն չի ժխտվում օրենքով հարկերը չվճարելու կամ դրանք նվազեցնելու ցանկացած հնարավորություն: Փորձագետները հարկերից շրջանցման մեխանիզմին վերագրում են՝

- այնպիսի գործարքներից հրաժարվելը, որոնց կատարումն անհրաժեշտաբար հանգեցնում է հարկեր վճարելուն,
- միտումնավոր և նպատակաուղղված այնպիսի եկամուտների ստացումը, որոնց գծով սահմանված են արտոնություններ,
- բացառապես հարկային ռեզիդենտության փոփոխության նպատակով հարկատուի դուրս գալը երկրից,
- հնարավորության դեպքում այնպիսի գործարքների կնքումը, որոնք առաջացնում են նվազագույն հարկային հետևանքներ:

Հարկային պլանավորման հիմքում, ըստ օրենքի, հարկերի նվազեցման խնդիրն է: Հենց այդ հանգամանքով է պայմանավորված, որ մասնագիտական գրականության մեջ հստակորեն չեն սահմանազատվում «հարկային պլանավորում» և «հարկերի վճարման շրջանցում» հասկացությունները: Ուսումնասիրված մոտեցումներում հարկային պլանավորումը հարկերի շրջանցման մեխանիզմից կարող է տարբերվել հետևյալ չափանիշներով.

- Հարկային պլանավորումը հստակ հիմնվում է հայտնի կատեգորիաների վրա, եթե ակնկալվող արդյունքը կարելի է որոշել այս կամ այն հավանականությամբ: Օրինակ՝ փոքր կազմակերպությունը կարող է ընտրել պարզեցված կամ սովորական հարկային ռեժիմ, որից անկախ, արդյունքը նախապես հայտնի է: Բոլոր դեպքերում հարկատու կազմակերպության գործողությունները պետք է գնահատվեն խելամտորեն:
- Հարկային պլանավորման մեխանիզմը կարող է ներառել հարկերից շրջանցման և հարկային վճարումներից շեղման մեխանիզմների տարրեր՝ որպես մասնավոր դեպք, եթե հատկապես դրանց կիրառման դեպքում օգուտը գերազանցում է ծախսերը և տույժերի կիրառման ռիսկը:
- Հարկային պլանավորումը կապված է վճարային գրաֆիկների հետևման և հարկային կառավարմանն առնչվող հարցերի հետ, սակայն վերաբերում է բացառապես ֆինանսական կառավարմանը:
- Հարկերի շրջանցումը կիրառելի է միայն առանձին գործարքների կամ դրանց փոխկապակցված խմբերի մասով: Հարկային վճարումները նվազեցնելու նպատակով բիզնեսի կազմակերպական կառուցվածքը փոփոխելու հարցերը բացառապես և ուղակիորեն վերաբերում են հարկային պլանավորմանը:

Հարկային պլանավորումն ունի օբյեկտիվ բնույթ, որ թելադրվում է շուկայական մրցակցության պահանջներով և տնտեսավարող սուբյեկտների կողմից հարկային ծախսերը կրճատելու ու ձեռնարկատիրական գործունեության հետագա զարգացման համար սեփական միջոցներն ավելացնելու ձգտմամբ:

20-րդ դարի 90-ական թվականներին տեսաբանների և գործնական մասնագետների տեսակետները տարբերվել են հարկային վճարումների նվազեցմանն ուղղված կառավարչական որոշումների ընդունման առանձին միջոցներով և ձևերով: «Հարկային պլանավորում» հասկացությունը մեկնաբանվել է որպես հարկային պարտավորությունների և վճարների նվազեցում: Ներմուծվել է բնորոշում, ըստ որի՝ հարկային պլանավորումը դիտարկվել է որ-

պես հարկային պարտավորությունների նվազեցման օրինական ուղի, որի ներքո հասկացվել է հարկատուի նպատակաուղղված գործունեություն, որը բյուջե հարկային վճարումների նվազեցման նպատակով կողմնորոշված է գոյություն ունեցող հարկային օրենսդրության բոլոր հնարավոր միջոցների առավելագույն օգտագործմանը:

21-րդ դարի սկզբներին հարկային պլանավորումը սկսվեց դիտարկվել որպես ֆինանսատնտեսական գործունեության կառավարման տարր: Չնայած դրան՝ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման տարբերակների ընտրության դեպքում չի անտեսվում հարկային պարտավորությունների նվազեցման նպատակը:

Հարկային պլանավորման սահմանափակ ընկալումը հանգեցրեց «հարկազանձման օպտիմալացում» հասկացությանը համապատասխանող նոր մոտեցումների մշակմանը և կիրառմանը: Մասնավորապես՝ Վ. Պանսկովը և Վ. Կնյազևը հարկային պլանավորումը բնորոշել են որպես հարկային պարտավորությունների օպտիմալացման՝ կազմակերպության հաշվային և ամորտիզացիոն քաղաքականության, ինչպես նաև հարկային արտոնությունների և հարկվող բազայից օրենքով նվազեցումների օգտագործում:

Սակայն ժամանակակից պայմաններում հարկային պլանավորման օպտիմալացմանը հնարավոր է անդրադառնալ ինչպես տեսական, այնպես էլ կիրառական տեսանկյունից: Օպտիմալ հարկային պլանավորումը ենթադրում է ստեղծագործական գործընթացի կազմակերպում, որը հաշվի է առնում մի շարք ներքին գործոններ.

- հարկային, մաքսային և օրենսդրության այլ դրույթների կատարելագործման միտումներ,
- պետության բյուջետային, հարկային և ներդրումային քաղաքականության հիմնական ուղղություններ,
- օրենսդրական, վարչական և դատական միջոցների համալիր, որն օգտագործվում է հարկային մարմինների կողմից հարկային վճարումներից շեղումները կանխելու, դրանք նվազեցնելու նպատակով,
- հարկային խորհրդատուների արհեստավարժություն:

Խոշոր կազմակերպությունների մասնագետների օպտիմալ հարկային պլանավորման ոլորտում տեսական մշակումները, ինչպես նաև գործնական փորձը հնարավորություն են ընձեռում ձևավորելու հարկային պլանավորման համակարգ:

Հարկային պլանավորման տնտեսական բովանդակությունը միկրոմակարդակում բնութագրվում է ֆինանսատնտեսական գործունեության կառավարման հետ ունեցած կապով: Ուստի հարկային պլանավորումը կարելի է բնորոշել որպես ֆինանսատնտեսական գործունեության շրջանակներում պլանային գործողությունների ամբողջություն՝ նպատակաուղղված կազմակերպության ֆինանսական ռեսուրսների ավելացմանը, հարկման բազայի և հարկազանձման այլ տարրերի մեծության ու կառուցվածքի կարգավորմանը, որով, ըստ գործող օրենսդրության, ապահովվում են բոլոր հարկերի ժամանակին վճարումները բյուջե:

Նշված նպատակի իրականացումը հնարավոր է ոչ միայն օրենսդրության դրական և բացասական կողմերի լիարժեք իմացության ու օգտագործման, այլև հարկազանձման նվազեցման ու օպտիմալացման բոլոր բաղադրիչների հետևողական ու խելամիտ կիրառման դեպքում: Այսպես՝

1. Հաշվապահական և հարկային հաշվառումը պետք է խստորեն համապատասխանի նորմատիվաիրավական ակտերին: Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալները պետք է հնարավորություն ընձեռեն ստանալու հարկային ոլորտներին առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն:
2. Հաշվառման քաղաքականությունը, որը, ըստ էության, հարկատուի կողմից հաստատված կազմակերպության հաշվապահական և հարկային հաշվառման վարման ձևերի ամբողջությունն է, օրենսդրությամբ հնարավորություն է տալիս ընտրելու տնտեսական գործունեության գնահատման և խմբավորման, ակտիվների արժեքի և հասույթի որոշման մեթոդներ:
3. Ոչ բոլոր տնտեսավարող սուբյեկտներն են ճիշտ և ամբողջությամբ կիրառում հարկերի գծով օրենսդրությամբ հաստատված արտոնությունները: Միաժամանակ, անհրաժեշտ է

իրականացնել գործարքների հնարավոր ձևերի վերլուծություն՝ հաշվի առնելով դրանց հարկային հետևանքները:

4. Հարկային բյուջեի կազմումը համարվում է կազմակերպության ղեկավար մարմինների և մասնավորապես՝ ֆինանսական տնօրենի կողմից վերահսկողության իրականացման հիմք: Սխալների նվազեցումը նպաստում է հարկային հաշվարկների ներքին վերահսկողության արարողակարգերի ու սկզբունքների կիրառմանը: Միաժամանակ, վերահսկողության կազմակերպումը, առաջին հերթին, նախատեսում է հարկային վճարումների ժամկետանցի բացառում: Սակայն չպետք է բաց թողնել օրենքով նախատեսված հարկային ցանկացած վճարում հետաձգելու և նվազեցնելու հնարավորություն:
5. Հարկային օրացույցի միջոցով անհրաժեշտ է ստուգել հաշվարկման ճշտությունը, հետևել բոլոր հարկային վճարումների ժամկետներին, ինչպես նաև հաշվետվությունների տրամադրմանը: Միշտ պետք է հիշել հարկային վճարների՝ ժամանակին չկատարելու հետ կապված ռիսկի մասին, քանի որ պարտավորությունները խախտելու դեպքում, հարկային, վարչական, մաքսային և քրեական օրենսդրությանը համապատասխան, պետությունը պարտավոր է կիրառել խիստ պատժամիջոցներ:
6. Շահույթի ավելացման առավել արդյունավետ մեթոդներից են կառավարման արդյունավետ համակարգի կառուցումը և որոշումների ընդունումը: Հենց նման մոտեցումն է ապահովում երկարաժամկետ հեռանկարում հարկային կորուստների առավել բարձր և կայուն կրճատում: Ռազմավարության հիման վրա մշակվում են միջնաժամկետ և ընթացիկ պլանների հարկային մոդելներ:
7. Հարկազանձման արտոնյալ ռեժիմների կիրառումը հարկերը նվազեցնելու ձևերի ամբողջությունն է՝ ի հաշիվ արտերկրում օՖՀորային ընկերությունների ստեղծման: Դրանք պետք է տրամաբանորեն և բնականորեն ներգրավվեն բիզնեսի ընդհանուր կառուցվածքում, հակառակ դեպքում՝ վերահսկող մարմինները կարող են վիճարկել տվյալ կառուցվածքի արդյունավետությունը:

8. Իմիտացիոն ֆինանսական մոդելները հնարավորություն են տալիս կառավարչին վերահսկելու մեկ կամ մի քանի փոփոխականների նշանակությունները, հաշվարկելու ընդհանուր հարկային բեռը և շահույթը:

9. Հարկային կառավարման հաշվետվավերլուծական գործունեությամբ ցանկացած ընկերություն պետք է տիրապետի մի քանի տարվա տեղեկատվության այն մասին, թե հարկային օպտիմալացման որ ձևերն ու միջոցներն են ապահովել դրական արդյունք, ինչ պատճառներով են եղել խոչընդոտներ, որ գործոններն են ազդել վերջնական ֆինանսական դրության վրա: Այսպիսով հիմքեր են ստեղծվում ընկերության ֆինանսատնտեսական գործունեության գործոնային վերլուծության, բիզնես-պլանի և հարկային բյուջեի մշակման համար:

Հարկային պլանավորման գործընթացը բաղկացած է փոխկապակցված մի քանի փուլերից, որոնք չպետք է դիտարկել որպես գործողությունների հստակ և միանշանակ հաջորդականություն, ինչը պարտադիր երաշխավորում է հարկային պարտավորությունների նվազեցում: Հարկային պլանավորման շրջանակներում համատեղվում են և՛ գիտության, և՛ արվեստի, և՛ վերլուծության տարրերը: Մինչև գրանցվելը և գործունեություն սկսելը կազմակերպությունը պետք է լուծի ռազմավարական բնույթի ընդհանուր խնդիրներ՝ ըստ ստորև ներկայացվող փուլերի՝

Առաջին փուլ. բիզնեսի կազմակերպման վերաբերյալ գաղափարը, նպատակի և խնդիրների ձևակերպումը, ինչպես նաև օրենսդրությամբ թույլատրվող հարկային արտոնությունների օգտագործման հնարավորությունների որոշումը:

Երկրորդ փուլ. հարկային տեսանկյունից՝ արտադրության, դրա մասնաճյուղերի, դուստր կազմակերպությունների և ղեկավար մարմինների առավել նպատակահարմար տեղի որոշումը:

Երրորդ փուլ. իրավաբանական անձի կազմակերպակազմական ձևի ընտրությունը և գործունեության ընթացքում առաջացող հարկային ռեժիմի հետ հարաբերությունը:

Չորրորդից-յոթերորդ փուլերը վերագրվում են ընթացիկ հարկային պլանավորմանը, որը սկզբունքորեն պետք է ներառվի տնտեսավարող սուբյեկտի կառավարման ամբողջ համակարգում:

Չորրորդ փուլ. հարկային արտոնությունների վերլուծության նպատակով կազմակերպության համար, այսպես կոչված, հարկային դաշտի ձևավորումը: Իրականացվող վերլուծության հիման վրա կազմվում է ընտրված հարկատեսակների գծով դրանց օգտագործման պլան:

Հինգերորդ փուլ. հաշվի առնելով ձևավորված հարկային դաշտը՝ մշակվում է կազմակերպության պայմանագրային հարաբերությունների համակարգ: Դրա համար, նկատի ունենալով հարկային հետևանքները, իրականացվում է գործարքների հնարավոր ձևերի պլանավորում՝ վարձակալություն, կապալառու, գնում-վաճառք, ծառայությունների անհատույց իրականացում: Արդյունքում, ձևավորվում է տնտեսավարող սուբյեկտի «պայմանագրային դաշտը»:

Վեցերորդ փուլ. սկսվում է տիպային տնտեսական գործառնությունների գրանցամատյանի կազմումից, որը ծառայում է որպես ֆինանսական և հարկային հաշվառման վարման հիմք: Հետագա քայլերում վերլուծվում են տարբեր հարկային իրավիճակներ, համադրվում են ստացված ֆինանսական ցուցանիշները տույժերի, տուգանքների և այլ պատժամիջոցներով պայմանավորված հնարավոր կորուստների հետ:

Յոթերորդ փուլ. անմիջականորեն կապված է հուսալի հաշվառման և ճշգրիտ ձևով հարկերը հաշվարկելու ու վճարելու վերահսկողության հետ: Սխալները նվազեցնելու հիմնական ձև կարող է լինել հարկային հաշվարկների ներքին վերահսկողության տեխնոլոգիայի օգտագործումը:

Հարկ է նշել, որ որոշ երկրներում ձևավորվել են հարկային վճարումներից շեղումը կանխող հատուկ մեթոդներ, որոնք, միաժամանակ, հնարավորություն են տալիս սահմանափակելու հարկային պլանավորման կիրառումը: Մասնավորապես՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և Եվրոմիության երկրներում գործում է «հակատրանսֆերտային», «հակաօֆշորային» և «հակադեմափինգային» կոշտ օրենսդրություն: Ուստի, հարկային կորուստների կրճատման հնարավորությունների որոնումն իրականացվում է միայն գործող սահմանափակումների համակարգի շրջանակներում:

Հարկային պլանավորման սահմանափակումներն են՝

- Օրենսդրական սահմանափակումներ. տնտեսավարող սուբյեկտի՝ հարկային մարմնում գրանցվելու, հարկերի հաշվարկմանն ու վճարմանն անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման պարտավորությունը: Դրանց կարելի է վերագրել նաև հարկային օրենսդրությունը խախտելու համար սահմանված պատասխանատվության միջոցները:
- Վարչական ներգործության միջոցներ. հարկային մարմիններն իրավունք ունեն պահանջելու ժամանակին և ճշգրիտ վճարել հարկերը, ներկայացնելու անհրաժեշտ փաստաթղթեր և բացատրություններ, ստուգելու տնտեսավարող սուբյեկտի արտադրական և պահեստային տարածքները: Ստուգումների ընթացք կարող են կիրառել համապատասխան պատժամիջոցներ՝ ընդհուպ հայտ ներկայացնել դատարան հարկատուի գույքից բռնագանձում կատարելու համար:
- Հատուկ դատական ընթացակարգեր. կիրառվում են հարկերը շրջանցելու կամ վճարման ենթակա գումարներից շեղվելու նպատակով օրենսդրությանը հակասող գործարքները դատարանների կողմից ճանաչելու համար:

Հարկային պլանավորման հիմնական սահմանափակումն այն է, որ հարկատուն իրավունք ունի հարկային պարտավորությունները նվազեցնել միայն օրինական մեթոդներով: Հակառակ դեպքում, հարկային տնտեսման փոխարեն հնարավոր են նշանակալի ֆինանսական կորուստներ, սնանկացում և ազատագրկում: Մյուս կողմից, հարկատուների վրա պետական կոշտ ներգործության դեպքում, անհրաժեշտ է հիշել Դ. Նյումենի խոսքը. «Հարկերի պատճառով արտերկիր է փախչում ոչ ավելի քիչ թվով մարդ, քան, օրինակ, բռնապետական ռեժիմի»:

Տնտեսավարող սուբյեկտներն իրավունք ունեն օրենքով չարգելված բոլոր հնարավոր ձևերով պաշտպանելու իրենց գույքային իրավունքները: Ինչ վերաբերում է հարկային վճարումներին, ապա դրանք նշանակալի բաժին ունեն կազմակերպությունների ֆինանսական հոսքերում: Ուստի բիզնեսի զարգացման հնարավորությունները, շատ հաճախ՝ նաև ճակատագիրը, կախված են հար-

կային ռիսկերի և դրանց կառավարման ուղղությամբ ընդունվող արհեստավարժ որոշումներից:

Կորպորատիվ հարկային կառավարումը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսների կառավարման բաղկացուցիչ մասն է, որի հիմնական նպատակներից մեկը հարկային օրենսդրության բոլոր առանձնահատկությունների օգտագործման ուղով հարկային վճարումների օպտիմալացումն է: Հարկերի վերահսկման գործընթացում կառավարիչների կարգավորող ներգործությունն անհրաժեշտ է դիտարկել ֆինանսական կառավարման ընդհանուր համատեքստում: Կազմակերպության հարկային կառավարումը ներկայացվում է ներքին վերահսկողության շրջանակներում:

Կորպորատիվ հարկային պլանավորումը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության անհրաժեշտ բաղկացուցիչներից է և, ըստ էության, հարկատուի հարկային բեռի նվազեցման օրինական միջոց է:

Իրենց գործունեության ընթացքում տնտեսավարող սուբյեկտները միշտ ձգտում են առավելագույնի հասցնել եկամուտներն ու շահույթը, ինչը կարող է չհամընկնել հարկային վճարումների նվազեցման խնդրի հետ: Քանի որ ներդրումային նոր նախագծերը կյանքի կոչելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի շահույթի վերահիմնավետավորվող մասի ձևավորումը, հետևաբար՝ կորպորատիվ հարկային պլանավորման հիմնական խնդիրն է գտնել հարկային վճարումների այնպիսի տարբերակ, որը կազմակերպության համար կհամարվի օպտիմալ:

Կորպորատիվ հարկային պլանավորման հիմնական սկզբունքներից են.

- Հարկային վճարումների նվազեցումը, որը կազմակերպության ֆինանսական վիճակի բարելավման և ներդրումային գրավչության բարձրացման ձև է: Հարկերն անհրաժեշտ է նվազեցնել մինչև այն պահը, երբ հաշվարկները ցույց են տալիս ազատ շահույթի աճման հնարավորությունը:
- Հարկերի նվազումը հաճախ հետևանք է ֆինանսական ցուցանիշների վատթարացման: Ուստի նվազեցման ցանկացած ձևի կիրառում նախևառաջ անհրաժեշտ է գնահատել տնտե-

սավարող սուբյեկտի ընդհանուր ֆինանսական դրության տեսանկյունից:

- Նվազեցման միևնույն ձևերի կիրառման հետևանքները նույնը չեն կարող լինել տարբեր օբյեկտների և նույնիսկ պայմանների պարագայում, հետևաբար՝ որոշակի երաշխիքների ապահովումը պետք է նախորդի կազմակերպության շահույթի հիմնավորված հաշվարկներին:
- Շահութահարկի նվազեցումը տնտեսապես հիմնավորված է համարվում միայն հետագա փուլերում՝ ընդհանուր շահույթի աճ ապահովելու դեպքում:

Ներքին հարկային վերահսկողությունն ըստ էության առաջնային վերահսկողություն է, որն իրականացվում է կազմակերպության հաշվապահության և ֆինանսական ծառայությունների աշխատակիցների կողմից: Նման վերահսկողությունը նախատեսում է հարկվող օբյեկտների հավաստիության ապահովում, հարկային հաշվարկների և հաշվետվությունների որակյալ կատարում և կազմում, ինչպես նաև հարկային վճարումների հաստատված ժամկետների հետևում:

Կազմակերպություններում հարկերի վերահսկման արդյունավետ համակարգի ձևավորման և կենսագործման համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ պայմանները.

- բիզնես-պլանի, բյուջեի և զարգացման փոխկապակցված ռազմավարության առկայություն,
- ցանցային տեխնոլոգիաների և համացանցի ռեսուրսների օգտագործման կողմնորոշում ունեցող տեղեկատվության հավաքագրման և մշակման համակարգի կազմակերպում,
- հարկային պլանավորման համար պատասխանատու ստորաբաժանման ձևավորում,
- հարկային պլանավորման սխեմայի մշակում,
- հարկային դաշտի և հարկային պլանների իրացման պայմանների վրա ազդող գործոնների մշտադիտարկում:

Հարկային պլանավորման արդյունավետությունը որոշվում է մի շարք գործակիցների օգնությամբ, որոնց հաշվարկման ընդհանուր կարգը նախատեսում է հարկային ծախսերի հանրագումարի կամ վաճառքի ծավալի, ինքնարժեքի կամ շահույթի առանձին բաղկա-

ցուցիչների հարաբերակցություն: Ցուցանիշները կարող են հաշվարկվել ինչպես միավորի, այնպես էլ տոկոսային տեսքով: Մասնավորապես՝ 1.1.2. արդյունակում ներկայացրել ենք հարկային պլանավորման արդյունավետության ցուցանիշները:

Աղյուսակ 1.1.2

Կորպորատիվ հարկային պլանավորման արդյունավետության ցուցանիշները


Ցուցանիշներ	Հաշվարկման հիմք
Հարկազանձման արդյունավետության գործակիցը՝ K ₁	Չուտ շահույթ (զուտ եկամուտ) / հարկային ծախսերի հանրագումար
Վաճառքի հարկատարությունը՝ K ₂	Հարկային ծախսերի հանրագումար /վաճառքի ծավալ Վաճառքի ծավալի ցուցանիշում անհրաժեշտ է ներառել արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների իրացումից հասույթը և գնորդներից ստացվող անուղղակի հարկերի գումարը
Եկամուտների հարկազանձման գործակիցը՝ K ₃	Շրջանառու հարկային ծախսեր / արտադրանքի իրացումից հասույթ Շրջանառու հարկային ծախսերում անհրաժեշտ է ներառել անուղղակի հարկերն այն եկամուտների գծով, որոնք իրենց բնույթով համարվում են շրջանառու
Ծախսերի հարկազանձման գործակիցը՝ K ₄	Հարկային ծախսեր/ընդհանուր ծախսեր
Շահույթի հարկազանձման գործակիցը՝ K ₅	Շահութահարկ / շահույթ, ընդ որում՝ հաշվարկներում կարող է օգտագործվել շահույթի ցանկացած ցուցանիշ՝ գործառնական, հարկվող, զուտ

Առաջարկված գործակիցների նշանակությունը բավական բարդ է միանշանակ գնահատել: Արդյունավետության գնահատումը հնարավոր է միայն դինամիկ հաշվարկների հիման վրա, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու որոշակի կազմակերպության միտումները: Մեր կարծիքով՝ առավել նախընտրելի է կորպորատիվ հարկային պլանավորման արդյունավետության գնահատման ցուցանիշների համեմատական վերլուծություններում տարանջատել սահմանային գոտիներ: Այլ խնդիր է ցուցանիշներն առանձին վերլուծելը: Այդ տեսանկյունից, օրինակ, վաճառքի հար-

կատարության ցուցանիշի համար նախընտրելի է գնահատման հետևյալ սանդղակը.

- Եթե ցուցանիշի նշանակությունը կազմում է մինչև 20 տոկոս, ապա հարկային պլանավորումը կարող է սահմանափակվել հաշվապահական հաշվառման և ներքին փաստաթղթաշրջանառության շրջանակներով, ուղղակի արտոնությունների կիրառմամբ և գլխավոր հաշվապահի ինքնակրթությամբ:
- Ցուցանիշի 20-45 տոկոսների միջակայքում հարկային պլանավորումը պետք է դառնա ընդհանուր ֆինանսական կառավարման և վերահսկողության մաս, ինչի համար պահանջվում է հատուկ նախապատրաստված մասնագետների ներգրավում կամ արտաքին հարկային խորհրդատուների, աուդիտորների մասնակցություն:
- Ցուցանիշի 45-70 տոկոսների միջակայքում հարկային պլանավորումը պետք է դառնա ռազմավարական պլանավորման կարևոր տարր. պարտադիր հարկային վերլուծության և փորձագիտական-կազմակերպական, իրավաբանական ու ֆինանսական միջոցառումների, նորարարության իրականացումը կպահանջեն արհեստավարժ հարկային խորհրդատուների, ինչպես նաև հարկազանձման և հարկային ղրրտներում մասնագիտացած իրավաբանների հետ համագործակցություն:
- Եթե ցուցանիշը գերազանցում է 70 տոկոսը, ապա տվյալ բիզնեսը հեռանկարում դառնում է աննպատակահարմար:

1.1.2. գծապատկերում ներկայացված է ընթացիկ հարկային պլանավորման ընդհանուր կառուցվածք, որտեղ Գ-ն արտացոլում է կազմակերպության մասնագետների կատարած հարկային հաշվառման, պայմանագրային և տնտեսական գործառնությունների տարբեր իրավիճակներ:



Գծապատկեր 1.1.2. Կազմակերպություններում հարկային պլանավորման ընդհանուր կառուցվածքը

Այժմ անդրադառնանք հարկային պլանավորման հաջորդականությանը:

1. Ընթացիկ պլանավորումը, առաջին հերթին, նախատեսում է հարկային դաշտի ձևավորում: Համապատասխան կազմակերպության կարգավիճակի, կանոնադրության և հարկազանձման ոլորտում գործող օրենսդրական ակտերի հիման վրա որոշվում են հիմնական հարկատեսակները, որոնք պետք է վճարվեն բյուջե: Կազմվում է հարկային աղյուսակ, որը բնութագրում է տնտեսավարող սուբյեկտի հարկային դաշտը՝ հիմնվելով հետևյալ հիմնական փոփոխականների վրա.

- վճարման աղբյուր՝ ծախսերի հոդված,
- հաշվապահական թղթակցում,
- հարկման բազա,

- հարկի դրույք,
- վճարման ժամկետ,
- տարբեր մակարդակի բյուջեներ վճարման համամասնություններ,
- հարկի հաշվարկման հստակ պայմաններ և արտոնություններ:

Այնուհետև կազմակերպության մասնագետների կողմից վերլուծվում են օրենսդրությամբ նախատեսվող արտոնությունները, յուրաքանչյուր հարկի գծով գործնականում դրանք կիրառելու հնարավորությունները: Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ կազմվում է ընտրված հարկերի գծով արտոնությունների օգտագործման պլան:

2. Համաձայն կազմակերպության կանոնադրության և Քաղաքացիական օրենսգրքի՝ ձևավորվում է պայմանագրային հարաբերությունների համակարգ՝ պայմանագրային դաշտ: Ընթացիկ ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում իրականացվում է գործարքների հնարավոր ձևերի պլանավորում՝ վարձակալություն, կապալառու, գնում-վաճառք, անհատույց ծառայությունների մատուցում: Յուրաքանչյուր գործարք պետք է գնահատվի փաստաթղթերը նախապատրաստելու պահին՝ հարկային հետևանքներ առաջանալու տեսանկյունից, այսինքն՝ մինչև գործարքի վերջնական կնքումը:

3. Ընտրվում են տիպային տնտեսական գործառնություններ, որոնք կազմակերպությունը նախատեսում է իրականացնել:
4. Մշակվում են տարբեր իրավիճակներ՝ հաշվի առնելով հարկային, պայմանագրային, տնտեսական բացթողումները:
5. Ընտրվում են լավագույն տարբերակները, որոնք ձևակերպվում են հաշվապահական և/կամ հարկային թղթակցումների խմբերի ձևով:
6. Օպտիմալ խմբերից կազմվում է տիպային տնտեսական գործառնությունների գրանցամատյան, որը ծառայում է որպես ֆինանսական և հարկային հաշվառման վարման հիմք:
7. Գնահատվում է առավելագույն ֆինանսական արդյունք ստանալու հնարավորությունը՝ հաշվի առնելով հարկային

ռիսկերը՝ հնարավոր պատժամիջոցները, իրականացվում է հարկային տեսանկյունից կազմակերպության ակտիվների առավել նպատակահարմար տեղաբաշխում:

8. Որոշվում են կազմակերպության հաշվառման քաղաքականության այլընտրանքային ձևերը: Հաշվառման քաղաքականությունը որոշակի սկզբունքների, կանոնների և կիրառական ձևերի ամբողջություն է, որ ընդունվում է տնտեսավարող սուբյեկտի կողմից հաշվապահական և հարկային հաշվառման ձևավորման, ֆինանսական հաշվետվությունների նախապատրաստման համար: Հաշվառման քաղաքականության միջոցով առավել մատչելի է կողմնորոշվել հարկազանձման հարցերում, ինչպես նաև ստեղծել հարկերի նվազեցման մոդել, որը կիրառելի է որոշակի կազմակերպության համար: Հաշվառման քաղաքականության մշակման դեպքում հարկ է լինում լուծելու հետևյալ խնդիրները.

- հաշվապահական հաշվառումը դարձնել թափանցիկ և հասանելի,
- ստեղծել հարկային հաշվառման համակարգ,
- նախատեսել հարկերի նվազեցման որոշակի ուղղություններ, որոնք չեն հակասում գործող օրենսդրությանը,
- ստեղծել ֆինանսական (հաշվապահական) ծառայության այնպիսի կազմակերպական կառուցվածք, որը կնպաստի հաշվապահական հաշվառման և հարկման խնդիրների ժամանակին ու հստակ որոշմանը:

Հաշվառման այն քաղաքականությունը, որը կհամապատասխանի վերը թվարկված խնդիրներին, կարող է գործնական օգնություն ցուցաբերել կազմակերպությանը, այլ ոչ թե դառնալ ձևական փաստաթուղթ, որը բարդություններից զերծ մնալու համար անհրաժեշտ կլինի ներկայացնել հարկային մարմիններին: Հարկային քաղաքականության մշակման դեպքում, անկասկած, հարկ է հաշվի առնել կազմակերպության գործունեության առանձնահատկությունները: Հաշվառման միջոցները, որոնք ձևավորում են ակտիվների գնահատումը, հասույթի ճանաչման ու ծախսերի դուրսգրման կարգը, ուղղակի կապ ունեն կազմակերպության հարկման և նրա ֆինանսական վիճակի հետ: Մանևրելով օրենքով թույլատրելի

սահմաններում՝ հաշվառման մեթոդաբանությամբ հնարավորություն է ստեղծվում ընտրելու հաշվառման առավել նպատակային ձևը: Ուստի հաշվառման և հարկային քաղաքականության տարրերի հստակ որոշումն ու խելամիտ կիրառումը արդյունավետ հարկային պլանավորման հիմնական ուղղություններից են:

1.2. Արտադրական կազմակերպություններում հարկային ռիսկերի կառավարումը

Ֆինանսատնտեսական գործունեության հիմնական կանոններից մեկը հանգում է հետևյալին. չխուսափել ռիսկից, այլ նախապես տեսնել այն՝ ձգտելով նվազեցնել ու հասցնել հնարավոր նվազագույն մակարդակի: Նշվածն իրականացնելու համար անհրաժեշտ է ճիշտ կառավարել ռիսկերը, այդ թվում՝ նաև հարկային: Հետևաբար՝ կարևորվում են այն հիմնարար սկզբունքները, որոնց պետք է հետևել հարկային ռիսկերի բացահայտման, գնահատման և նվազեցման միջոցառումներ ձեռնարկելիս.

1. **Ծախսերի համարժեքության սկզբունք:** Ռիսկերի նվազեցման ներդրված կառուցվածքի արժեքը չպետք է գերազանցի հավանական կորուստների գումարը, որոնք հարկային ռիսկերի հետևանք են: Նշված կառուցվածքի ստեղծման և դրա սպասարկման ծախսերի թույլատրելի հարաբերակցությունը հարկային ծախսերի տնտեսման գումարին, արտացոլված ռիսկի ձևով, ունի անհատական շեմ, որը կարող է կախված լինել ինչպես տվյալ կառուցվածքին առնչվող ռիսկի աստիճանից, այնպես էլ հոգեբանական գործոններից: Գործնականում նման շեմը նվազեցվող ռիսկի չափի 50-90 տոկոսն է:

2. **Իրավական համապատասխանության սկզբունք:** Հարկային ռիսկերի օպտիմալացման կառուցվածքը, անշուշտ, պետք է համապատասխանի ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային օրենսդրությանը: Այս սկզբունքը հաճախ անվանում են փոքրագույն դիմադրության մարտավարություն: Վերջինիս էությունը հանգում է հարկային ռիսկերի նվազեցման կառուցվածքի ստեղծման անթույլատրելիությանը՝ հիմնված նորմատիվ ակտերի բացթողումների վրա: Այն դեպ-

քերում, երբ օրենսդրության առանձին դրույթներ համարվում են վիճահարույց և կարող են կիրառվել և՛ ի շահ հարկատուների, և՛ ի շահ պետության, ապա առաջանում է կամ դատական միջամտության հավանականություն, կամ կիրառվող մոտեցման վերակառուցում:

3. **Գաղտնիության սկզբունք:** Փաստացի տեղեկատվության հասանելիությունը և իրականացվող գործարքների հետևանքները պետք է առավելագույնս սահմանափակվեն: Գործնականում դա նշանակում է, որ, առաջին հերթին, որոշ կատարողներ և կառուցվածքային միավորներ, որոնք մասնակցում են ռիսկերի օպտիմալացման ընդհանուր շղթային, պետք է ղեկավարվեն միայն հստակ հանձնարարականներով: Երկրորդ, պատասխանատու անձինք և սեփականատերերը պետք է խուսափեն հանձնարարականներ տալուց և պահպանեն ընդհանուր ծրագրերը անհատական նույնականացման միջոցներ (ձեռագիր, ստորագրություն, կնիք) օգտագործելիս:
4. **Պատասխանատվության սկզբունք:** Հարկային ռիսկերի նվազեցումից ցանկալի արդյունք ստանալը պայմանավորված է կիրառվող արդյունավետ վերահսկողությամբ և բոլոր փուլերում կատարողների վրա ներազդելու իրական լծակների առկայությամբ:
5. **Ձևի և բովանդակության թույլատրելի համակցման սկզբունք:** Հայտնի են դեպքեր, երբ կազմակերպությունները, որոնք իրենց հաշվեկշռում չունեն կամ չեն վարձակալել անհրաժեշտ հիմնական միջոցներ, միայն տնօրենի հաստիքի առկայությամբ մատուցել են տրանսպորտային, տպագրական և այլ բնույթի ծառայություններ: Տվյալ դեպքում՝ պատվիրատուներին ավելի քիչ են հետաքրքրում կատարողի բավարար նյութատեխնիկական բազայի առկայությունը, հաշվարկման կարգը և մյուս պայմանները: Իրավական և փաստացի գործողությունների համապատասխանեցումը կարևոր է ոչ միայն գործընթացի անբարեխիղճ մասնակիցներից պաշտպանվելու, այլև ստուգողների հնարավոր կասկածներից խուսափելու համար:

6. **Չեզոքության սկզբունք:** Հարկային ռիսկերի օպտիմալացումն անհրաժեշտ է իրականացնել ի հաշիվ սեփական հարկային վճարումների, այլ ոչ թե անկախ գործընկերների հատկացումների մեծացման: Տվյալ սկզբունքը կարող ենք անվանել նաև շահավետ փոխգործակցության:

7. **Բազմազանեցման սկզբունք:** Բյուջեի հատկացումների օպտիմալացումը, որպես տնտեսական գործունեության ձև, կապված նյութական արժեքների շարժի և պահպանման հետ, կարող է ենթարկվել անբարենպաստ, տարբեր բնույթի ներքին ու արտաքին գործոնների ազդեցության: Այդպիսիք են օրենսդրության փոփոխությունները, առաջնային պլանների թերակատարումները, ֆորս-մաժորային իրավիճակները:
8. **Ինքնավարության սկզբունք:** Ռիսկերի օպտիմալացման գործողությունները պետք է հնարավորինս քիչ կախված լինեն արտաքին մասնակիցներից: Հարկային ռիսկերի օպտիմալացման գործընթացը պետք է կառավարվի առավելագույն ինքնավարության պայմաններում: Նշենք նաև, որ գաղտնիության և պատասխանատվության սկզբունքները համարժեք չեն ինքնավարությանը, այլ կարող են դիտարկվել որպես դրա առանձին բաղադրիչներ:


Հարկային ռիսկերի բացահայտման և գնահատման համար անհրաժեշտ է նախևառաջ օպերատիվ և հավաստի տեղեկատվություն: Ինչպես նշել է գերմանացի պրոֆեսոր Հ. Մարկլը, 21-րդ դարի կոշտ մրցակցության պայմաններում, շուկաների գլոբալացմամբ, հաղթանակ կտոնեն ոչ թե խոշոր կազմակերպությունները փոքրերի նկատմամբ, այլ դինամիկները՝ փոփոխվող իրավիճակին դանդաղ արձագանքողների նկատմամբ¹:

Տեղեկատվական ապահովվածությունը ռիսկի գնահատման և ծրագրավորման դեպքում ծառայում է ոչ միայն որպես վերլուծությանն անհրաժեշտ տվյալների աղբյուր, այլև համարվում է ռիսկի նվազեցման միջոց: Սակայն տեղեկատվության հասանելիությունը, որի հիման վրա կայացվում են որոշումներ, սահմանափակ է, ինչ

¹ Гайкова Е., Сколько стоит эффективное управление? / Е. Гайкова, А. Шубин // Экономика и жизнь. – 2002. – № 172. – С. 8.

էլ ռիսկի վարքագծի և կանխատեսման ընտրության դեպքում առաջացնում է անորոշություն:

Հարկային ռիսկերի բացահայտման և գնահատման հաշվառման աղբյուրներ են համարվում հաշվապահական և վիճակագրական հաշվետվությունները, օպերատիվ հաշվառման և հաշվառման ընտրանքային տվյալները (հարկային ռիսկի կառավարման գործընթացը տե՛ս 1.2.1 գծապատկերում):



Գծապատկեր 1.2.1. Հարկային ռիսկի կառավարման գործընթաց

Վենչուրային աղբյուրներին են վերաբերում վերահսկողության, ներքին և արտաքին աուդիտի, ստուգումների տվյալները, ֆինանսական և վարկային կազմակերպությունների հետ գործարքների գրանցման թղթակցությունները: Բացի նշվածից, ռիսկի վերլուծության դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել երկրի տնտեսության մեջ առկա միտումները, իրավիճակը և համեմատել դրանք սեփական կազմակերպության ֆինանսական վիճակի, կապիտալ ներդրումների և արտադրության զարգացման մշակված ծրագրերի հետ, ինչը հնարավոր չէ առանց ծրագրային նորմատիվային համապատասխան տվյալների ներգրավման, որոնք առկա են բիզնես-ծրագրի բաժիններում, տեղեկատվական աղբյուրներում:

Ռիսկի կառավարման երկրորդ փուլը, ռիսկի բացահայտման մեթոդների ամբողջությունն է: Որպեսզի գնահատվի հարկային ռիսկը և ընդունվի համապատասխան որոշում, անհրաժեշտ է հավաքագրել ելակետային տեղեկատվություն ռիսկի օբյեկտ-կրողի վերաբերյալ: Այս առաջնային փուլը կրում է «ռիսկի բացահայտում» անվանումը և ներառում է երկու բաժին՝ օբյեկտի կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվության ընտրություն և վտանգների բացահայտում:

Ելքային տեղեկատվության ստացման հիմնական մեթոդներին վերաբերում են հետևյալները.

1. ստանդարտացված հարցաթերթիկ,
2. կառավարչական և ֆինանսական հաշվետվությունների առաջնային փաստաթղթերի ուսումնասիրում և վերլուծություն,
3. եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունների տվյալների վերլուծություն,
4. կազմակերպության կազմակերպական կառուցվածքի դիագրամի կազմում և վերլուծություն,
5. արտադրական գործընթացների տեխնոլոգիական հոսքերի քարտեզի կազմում և վերլուծություն,
6. արտադրական ստորաբաժանումներում ստուգայցեր,
7. տվյալ ճյուղի մասնագետների խորհրդատվություններ,
8. խորհրդատվական կազմակերպությունների կողմից փաստաթղթերի փորձաքննություն:

Երրորդ փուլում անհրաժեշտ է իրականացնել ռիսկի գնահատում: Այնուհետև սկսվում է ռիսկի վրա ներազդելու մեթոդի ընտրության փուլը՝ ապագայում նպատակ ունենալով նվազագույնի հասցնել հավանական կորուստը: Գոյություն ունի ռիսկի նվազեցման մի քանի ձև, ուստի գործնականում առաջանում է հարկային ռիսկի վրա մեթոդների ներազդման համեմատական արդյունավետության գնահատման և դրանցից լավագույնն ընտրելու բարդություն: Դրանից հետո հնարավորություն է ընձեռնվում ձևակերպելու կազմակերպության ամբողջ ռիսկերի կառավարման ռազմավարություն: Սա որոշումների ընդունման փուլն է, երբ սահմանվում են պահանջվող ֆինանսական և աշխատանքային ռեսուրսները, կառավարիչները ձևակերպում են խնդիրը, տեղի են ունենում գոյություն ունեցող ծառայությունների շուկայի վերլուծություն և մասնագետների հետ խորհրդակցություններ: Ռիսկի վրա ուղղակի ներազդման գործընթացը ներառում է երեք ձև՝ նվազեցում, պահպանում և փոխանցում: Ռիսկի նվազեցումը ենթադրում է կամ հնարավոր կորուստների մեծության, կամ անբարենպաստ իրադրությունների առաջացման հավանականության կրճատում: Շատ հաճախ դա տեղի է ունենում նախազգուշական-կազմակերպական միջոցառումների օգնությամբ:

Հարկային ռիսկերի կառավարման եզրափակիչ փուլ է համարվում ընտրված ռազմավարության իրացման արդյունքների վերահսկողությունը և ճշգրտումները՝ հաշվի առնելով նոր տեղեկատվությունը:

Վերահսկողությունը պայմանավորված է կառավարիչների մեղքով հասցված վնասների և դրանց կրճատման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների ընդունման վերաբերյալ տեղեկատվության ստացմամբ: Այն կարող է արտացոլվել նոր հանգամանքների բացահայտմամբ, որոնք փոփոխում են ռիսկի մակարդակը ապահովագրական ընկերություններին այդ տեղեկատվությունը փոխանցելիս, անվտանգության ապահովման համակարգի արդյունավետությանը հետևելիս:

Վերը ներկայացվածի առումով ստորև առաջարկում ենք հետևյալ մոտեցումը.

Առաջին փուլ: Տեղեկատվական բազայի վերլուծություն: Առաջարկում ենք իրականացնել նշված ուղղություններով.

- հիմնադրական փաստաթղթերի վերլուծություն,
- գույքի հիմնական խմբերի ձեռքբերման կամ օտարման գծով, ըստ օրինական գործարքների, պայմանագրային բազայի վերլուծություն, ընդ որում, անշարժ գույքի, բաժնետոմսերի/բաժնեմասերի գծով՝ առաջնահերթ,
- բոլոր գործարքների գծով հիմնական արտադրատեսակների իրացման ձևերի պայմանագրային բազայի, մասնավորապես՝ մատակարարման պայմանագրերի, միջնորդային սխեմաների, ներառյալ ներքին և արտաքին շուկաներում արտադրանքի իրացման գործարքների վերլուծություն,
- դատական միջամտությունների և ստուգման փուլում դրանց արդյունքների վերլուծություն,
- ըստ հաշվապահական հաշիվների՝ ստուգման փուլի յուրաքանչյուր ամսում հաշվապահական հաշվառման տվյալների վերլուծություն.
 - ✓ *ծախսումներ/ծախսեր,*
 - ✓ *հասույթ/եկամուրներ,*
 - ✓ *ոչ ընթացիկ ակտիվներ,*
 - ✓ *ընթացիկ ակտիվներ,*
 - ✓ *կապիտալ և պահուսպներ,*
 - ✓ *դեբիտորական/կրեդիտորական պարտավորություններ,*
 - ✓ *ըստ յուրաքանչյուր դիտարկվող հարկատեսակի՝ բյուջեին առնչվող հաշվարկներ,*
 - ✓ *ֆինանսական արդյունքների վերլուծություն,*
- հաշվառման դիտարկվող կառուցվածքի մասով յուրաքանչյուր թղթակցման գծով առաջնային փաստաթղթերի փաթեթի վերլուծություն,
- տնտեսավարող սուբյեկտի հետաքրքրության շրջանակում գտնվող յուրաքանչյուր հարկի գծով հարկային բազայի վերլուծություն,
- շահութահարկի գծով հարկային ռեգիստրի վերլուծություն,
- հարկային հայտարարագրերի տվյալների վերլուծություն,

- ճշգրտված հայտարարագրերի տվյալների վերլուծություն,
- տեսագրության և ճանապարհային ստուգումների ակտերի, հարկային վեճերի վերլուծություն:

Երկրորդ փուլ: Ընդհանուր հարկային բեռի որոշում: Այս մեծությունը բնութագրում է հարկային վճարումների բաժինը հարկատուի համախառն եկամուտներում, իսկ առավելապես՝ իրացումից հասույթում: Կազմակերպությունների հարկային բեռի հաշվարկման համար առկա են տարաբնույթ մոտեցումներ:

Ընդհանուր առմամբ, հարկային բեռի ծանրությանն առնչվող հիմնախնդիրը մտահոգում է տնտեսական գործունեության շղթայի տարբեր գործընկերների: Մասնավորապես՝

- պետությանը՝ որպես իր տարածքում տնտեսական գործունեությունը կարգավորող և իր եկամուտներից հոգուտ պետական և սոցիալական կյանքի գործունեության տարրերին վերաբաշխող սուբյեկտի,
- կազմակերպություններին՝ որպես պետության վերահսկման օբյեկտների և սեփական ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների, որոնք ապահովում են ձեռնարկատիրական եկամուտների աղբյուրները և հետևաբար՝ հարկման բազան,
- վարձու աշխատողներին՝ որպես ձեռնարկատիրական գործունեության մասնակիցների, որոնք իրենց համար ապահովում են գոյության միջոցներ:

Վերը թվարկված գործակալներից յուրաքանչյուրին հարկազանձման հիմնախնդիրները մտահոգում են՝ պայմանավորված սեփական շահերով, ուստի տարբեր են նաև գործող հարկային համակարգի համեմատ հավանական այլընտրանքները: Պետությունը համեմատում է հարկային բեռն այլ երկրների նույն ցուցանիշի հետ, բնակչությունը համեմատում է իր աշխատանքի եկամտաբերությունն այլ կազմակերպություններում համանման աշխատանքի հետ կամ ստվերային զբաղվածության պայմաններում, ինչպես նաև զարգացած երկրների առումով:

Ընդհանուր հարկային բեռի միջոցով կարելի է պատկերացում կազմել ամբողջությամբ կազմակերպության վճարած հարկային գումարների բաժնի մասին: Այսպես՝ եթե հարկատուի հարկային

բեռը բարձր է ՀՀ-ում այդ ցուցանիշի միջինից, և առկա է շահույթ, ապա կարելի է ենթադրել, որ նա ունեցել է գերավճարներ: Հետևաբար՝ անհրաժեշտ է վերլուծել հարկային վճարումների կառուցվածքը՝ հաշվի առնելով կազմակերպության գործունեության առանձնահատկությունները: Եթե հարկատուի հարկային բեռի ցուցանիշը շահույթի առկայության պայմաններում ցածր է ՀՀ-ում այդ ցուցանիշի միջինից, ապա կարելի է ենթադրել, որ կազմակերպությունը ամբողջությամբ չի վճարում հարկերը: Հարկ է նկատել, որ ցածր հարկային բեռի պատճառ կարող է լինել հարկազանձման մինիմալացման կիրառումը: Այս դեպքում անհրաժեշտ է կենտրոնանալ հարկային ռիսկերի վերլուծության վրա:

Գոյություն ունի հետևյալ կանոնը. Որքան ցածր է հարկային բեռը, այնքան բարձր է հարկային ռիսկը, և համապատասխանաբար՝ որքան բարձր է հարկային բեռը, այնքան ցածր է հարկային ռիսկը:

Հատուկ ուշադրության պետք է արժանացնել այն իրավիճակներին, երբ շահույթի առկայության դեպքում հարկատուն ունենում է ցածր հարկային բեռ, ինչը կարող է պայմանավորված լինել սխալներով: Նույնիսկ եթե հաշվարկներով ստացվում է ցածր հարկային բեռ, որն արտոնությունների ճիշտ կիրառման արդյունք է, անհրաժեշտ է ստուգել դրանց կիրառման ճշտությունը: Առկա է նաև հակառակ իրավիճակը, երբ վնասի դեպքում հարկային բեռը բարձր է: Բարձր հարկային բեռը կարող է պայմանավորված լինել նաև առանձին հարկատեսակների գծով կատարվող կանխավճարներով (ներկայումս ՀՀ-ում՝ շահութահարկի գծով):

Երրորդ փուլ: Վճարվող հարկերի մասնաբաժնի վերլուծություն: Այս փուլում վերլուծության է ենթարկվում յուրաքանչյուր հարկատեսակի մասնաբաժինը վճարված հարկերի ընդհանուր գումարում: Այս վերլուծության տվյալներով կարելի է բացահայտել այն հարկերը, որոնք հարկային վճարումների գումարում ունեն ամենամեծ մասնաբաժինը: Ընդհանուր առմամբ, հարկային ռիսկերի բացահայտումը և վերլուծությունը պետք է նպատակաուղղվեն, առաջին հերթին, այն հարկատեսակներին, որոնք ունեն վճարումների առավել մեծ չափեր: Կարևոր է նաև, որ վերը ներկայացված հաշվարկները կատարվեն վերլուծվող փուլում հայտարարագրված հարկերի գումարների հիման վրա:

Չորրորդ փուլ: Հարկային արտոնությունների վերլուծություն: Այս գործընթացի շրջանակներում անհրաժեշտ է կազմել բոլոր հարկատեսակների համար կիրառվող արտոնությունների ցանկ: Այդպիսով՝ հնարավոր է բացահայտել այն բոլոր հարկային արտոնությունները, որոնք հարկատուն չի կիրառում:

Հինգերորդ փուլ: Խնդրահարույց գոտիների բացահայտում: Այս փուլում խնդիր է դրվում բացահայտելու հարկատուի գործունեության այն գոտիները, որոնք ավելի շատ հարկային բարդություններ են առաջացնում: Ի վերջո՝ հարկատուն կազմում է խնդրահարույց գոտիների ցուցակ՝ հետագայում դրանք ավելի խորությամբ վերլուծելու համար:

Վեցերորդ փուլ: Հարկային ռիսկերի բացահայտում: Այստեղ անհրաժեշտ է բացահայտել հարկատուի հիմնական հարկային ռիսկերը՝ դրանց հետագա վերահսկման և հետևանքների հնարավորինս մեղմման նպատակով: Հարկ է բոլոր հարկային ռիսկերը բաժանել երեք խմբի՝ կազմելով ռիսկերի քարտեզ.

1. Ռիսկեր, որոնք հարկատուն պատրաստ է կրել: Դրանք այն ռիսկերն են, որոնք հարկատուն, հետևանքների առումով, համարում է ամենաթույլը:
2. Ռիսկեր, որոնք հարկատուն պետք է վերահսկի: Դրանք այն ռիսկերն են, որոնք անընդհատ վերահսկման կարիք ունեն. (օրինակ՝ հարկային մարմնից իր օգտին բացատրություն ստանալը, դատարանում իր իրավունքները պաշտպանելու հեռանկարը):
3. Ռիսկեր, որոնք անհրաժեշտ է կանխել: Դա հարկային ռիսկերի այն խումբն է, որ անհրաժեշտ է անհապաղ վերացնել, քանի որ մեծ է հավանականությունը, որ հարկային ստուգումների դեպքում կբացահայտվեն չվճարումները, հակատուն կենթարկվի տույժերի և տուգանքների:

Եթե հարկատուի գործունեության բնույթը փոխվում է, ապա իմաստ ունի ռիսկ-ցուցանիշների հիման վրա ներդնել ռիսկերի մշտադիտարկման համակարգ:

Յոթերորդ փուլ: Հարկային պլանավորման կազմակերպական վերլուծություն: Այս գործողության նպատակն է հասկանալ, թե կազմակերպությունում հարկային պլանավորման աշխատանք-

ներն ինչ մակարդակի վրա են: Դա ուղղակիորեն վերաբերում է կազմակերպության գործառնական կառուցվածքին: Այսպես՝ հարկային պլանավորման աշխատանքներ կարող են ընդհանրապես չիրականացվել հարկատուի կողմից կամ էլ իրականացվել մասնակիորեն: Հետևաբար՝ կազմակերպական վերլուծությունը նպատակահարմար է կատարել հարկային պլանավորման հիմնական գործառույթներին համապատասխան.

- հարկազանձման օպտիմալացում,
- վճարման ենթակա հարկային գումարների պլանավորում,
- հարկերի վճարման ժամկետներին հետևելը,
- հարկային ռիսկերի բացահայտում և վերլուծություն,
- հարկային օրենսդրության մեջ փոփոխությունների կանխատեսում:

Այս վերլուծության շրջանակներում բացահայտվում է, թե որ ստորաբաժանումը ինչ գործառույթներ է կատարում, վեր են հանվում կրկնվող և տվյալ պահին չիրականացվող գործառույթները:

Ութերորդ փուլ: Հաշվառման քաղաքականության վերլուծություն: Վերլուծվում է հարկային օպտիմալացման առարկայի նկատմամբ հարկատուի հաշվառման քաղաքականությունը:

Իններորդ փուլ: Առանձին հարկատեսակների «ախտորոշում»:
Յուրաքանչյուր հարկատեսակի գծով անհրաժեշտ է կատարել «ախտորոշում», որը հնարավորություն կընձեռի բացահայտելու հարկային ռիսկերի նվազեցման հնարավորությունները:

Տասներորդ փուլ: Էքսպրես-աուդիտ: Սա մի գործողություն է, որի միջոցով կարելի է խորությամբ ուսումնասիրել հարկատուի գործունեության բնույթը և բացահայտել համակարգային սխալները: Էքսպրես-աուդիտը նման է սովորական աուդիտին, մասնավորապես՝ ստուգվում են փաստաթղթերն ու հաշվետվությունները: Էքսպրես-աուդիտի և սովորական աուդիտի միջև տարբերությունը միայն ընտրանքի մեծությունն է: Էքսպրես-աուդիտի շրջանակներում հարկատուի իրականացրած գործառնությունների հիմնական տեսակները ենթարկվում են ստուգման 1-3 գործառնությունների մասով՝ ըստ յուրաքանչյուր տեսակի: Նման կարգով բոլոր հիմնական գործառնությունները ստուգվում են համակարգային սխալների գծով: Էքսպրես-աուդիտի առավելություն է համարվում այն

փաստը, որ դրա արդյունքներով հնարավոր է վեր հանել հարկատուի բոլոր էական սխալները ժամանակային փոքր ծախսերի դեպքում: Հարկ է նշել, որ էքսպրես-աուդիտը կարող է պատահական սխալները չբացահայտել, ինչը, ինչպես նշեցինք, դրա հիմնական նպատակը չէ:

Կարծում ենք՝ ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի հարկազանձման մեխանիզմի արդյունավետության բարելավման հաջորդ ուղին «Հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագրին» առնչվող՝ ՀՀ Կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի N1636-Ն որոշման կիրառումն է:

Հարկային պլանավորման տեսանկյունից՝ ռիսկի վրա հիմնված մեթոդաբանությունը հարկատուի կայուն ֆինանսական վիճակի և վճարունակության ցանկալի մակարդակի ապահովման հիմնական մոտեցումներից է: Մասնավորապես՝ ռիսկի համակարգի նպատակն է ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրությունը կառուցել ռիսկային չափանիշների հիման վրա, ինչից ակնհայտ է դառնում, որ յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտ պետք է վերահսկի հարկային մարմնի հետ փոխհարաբերությունների ընթացքում առաջացող հավանական ռիսկերը: Հատկանշական է, որ քննարկվող մեթոդաբանության շրջանակներում «...ռիսկը հարկ վճարողի կողմից օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու, հարկերը և այլ պարտադիր վճարները ճիշտ չհաշվարկելու և չվճարելու, դրա հիման վրա հարկային մարմնի կողմից վերահսկվող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու հավանականությունն է և այդ խախտումներից ակնկալվող պետության վնասները...»:

Ներկայացվող մեթոդաբանությամբ ռիսկերի գնահատումը կատարվում է չորս քայլով և հիմնվում է հարկ վճարողների հարկային մարմին ներկայացվող հաշվարկների, հաշվետվությունների տվյալների, դրանց վերլուծության արդյունքների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով այլ տեղեկությունների վրա:

Առաջին քայլով դասակարգվում են հարկային մարմնում հաշվառված հարկ վճարողներն ըստ միատարր խմբերի: Երկրորդ

քայլով ձևավորվում են ռիսկային չափանիշներ և սահմանվում դրանց ռիսկայնության աստիճանի հաշվարկման բանաձևեր: Երրորդ քայլով որոշվում է ռիսկային չափանիշների հիման վրա հարկային հաշվարկների ռիսկայնության աստիճանը, իսկ վերջին՝ չորրորդ քայլով, ելնելով նշված որոշման արդյունքներից, հարկ վճարողները դասակարգվում են բարձր, միջին և ցածր ռիսկայնության խմբերում:

Կարծում ենք՝ քննարկվող մեթոդաբանությամբ հարկ վճարողների դասակարգումն ըստ միատարր խմբերի առավել նպատակահարմար կլինի իրականացնել ոչ թե 7-րդ հոդվածով նախատեսված սկզբունքների համաձայն, այլ՝ դասակարգելով գերփոքր, փոքր, միջին և խոշոր հարկ վճարողների խմբերում: Տվյալ մոտեցմամբ հնարավոր կլինի վերացնել առկա անհարթություններն ինչպես հաշվապահական հաշվառման, այնպես էլ ՓՄՁ ոլորտի դասակարգման օրենսդրական պահանջների միջև:

Տարանջատել ենք 21 ռիսկային չափանիշներ՝ ըստ կենտրոնական հարկային մարմնի տվյալների բազայում առկա, հարկ վճարողների կողմից հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկների տվյալների, դրանց վերլուծության արդյունքների, օրենսդրական պահանջների խախտումների, վիճակագրական և այլ տեղեկությունների: Ինչ վերաբերում է ներկայումս շեշտադրվող ռիսկային չափանիշներին, ապա դրանք հետևյալն են.

1. շահութաբերության մակարդակ,
2. ստուգման արդյունքներ,
3. նախկինում կատարված ստուգումների տվյալներ,
4. հայտարարագրված շահույթի կամ վնասի ցուցանիշների առկայություն,
5. նախորդ տարիների շահութաբերության մակարդակների համադրման ցուցանիշներ,
6. ակտիվների, նվազեցվող կորուստների, փոփոխությունների, հիմնական միջոցների, հարկվող շահույթի, վնասի, համախառն եկամտի համադրման ցուցանիշներ,
7. գործունեության տարբեր վայրերի առկայություն,
8. իրացման շրջանառության, համախառն եկամտի ծավալներ,

9. հարկային հաշվարկների ուշացման, ճշգրտումների առկայություն,
10. հարկային արտոնությունների կիրառման առկայություն,
11. իրացման և ձեռքբերման ցուցանիշների համադրման արդյունքներ,
12. ներմուծման և մաքսային արժեքի ցուցանիշների համադրման տվյալներ,
13. հետաձգված հարկերի առկայություն,
14. եկամտամբերության մակարդակ,
15. արտաքին տնտեսական գործունեության առկայություն,
16. նախորդ տարիների եկամտաբերության մակարդակների համադրման ցուցանիշներ,
17. ընդհանուր և որոշ այլ ծախսերի համադրման ցուցանիշներ, տեսակարար կշիռներ,
18. քաղաքացիաիրավական պայմանագրերի առկայություն,
19. հարկման տարբեր ռեժիմների առկայություն,
20. միջին ամսական աշխատավարձի ցուցանիշի համադրման արդյունքներ,
21. մեկ աշխատողի հաշվով իրացման շրջանառության, հարկվող շահույթի, եկամտի ցուցանիշներ:

Նշենք, որ ռիսկային չափանիշները, ըստ իրենց կարևորության աստիճանի, տարբերակվում են բարձր, միջին և ցածր խմբերում: Ինչ վերաբերում է ռիսկայնության առավելագույն միավորի հաշվարկին, ապա դա արտացոլվում է հետևյալ բանաձևով.

$$2ԱՄ = ԱԱ / (ԿԸ \times ԶԿ), (2.2.1)$$

որտեղ՝

- 2ԱՄ-ն՝ չափանիշի առավելագույն միավորն է,
- ԱԱ- ն՝ առավելագույն սահմանն է,
- ԿԸ- ն՝ բոլոր չափանիշների կշիռների հանրագումարն է,
- ԶԿ- ն՝ տվյալ չափանիշին տրված կշիռն է:

Դիտարկելով նշված բանաձևը և, մասնավորապես, չափանիշների գնահատման առաջարկվող միջակայքերը, պարզ է դառնում, որ շատ հարցեր հարկ վճարող կազմակերպությունների համար մնում են անհասկանալի, սահմանափակվում է մեթոդաբանության

թափանցիկությունը, ինչը կարող է հանգեցնել նաև հարկ վճարողի ռիսկայնության միավորի խեղաթյուրման և սխալ դասակարգման:

Մեր կարծիքով՝ կատարելագործման կարիք ունի նշված մեթոդաբանության շրջանակներում գնահատված հարկային հաշվարկների հիման վրա հարկ վճարողների՝ ըստ ռիսկայնության դասակարգման մոտեցումը: Օրինակ՝ այն սկզբունքը, ըստ որի՝ եթե հարկ վճարողը հարկային հաշվարկների տարեկան ռիսկային միավորների հիման վրա միաժամանակ ներառվել է ռիսկայնության տարբեր խմբերում, ապա նրա ռիսկայնության խումբը որոշվում է՝ հիմք ընդունելով տարեկան ամենաբարձր ռիսկային միավոր ունեցող հարկային հաշվարկը, անտեսվում է սեփական նախաձեռնությամբ հարկային ռիսկի կառավարման, հարկային պլանավորման հույժ կարևոր խնդիրը:

Միաժամանակ, ֆինանսական վերահսկողությանը համահունչ, ներկայացված մեթոդաբանությունը պահանջում է ըստ օրենքի պարտադիր աուդիտի ենթակա հարկ վճարողներին ապահովել աուդիտի անցկացում, որպեսզի բացառվի ռիսկայնության բարձր խմբում հայտնվելու հանգամանքը: Աուդիտի դրական եզրակացություն ակնկալելու համար շահագրգռված են հենց հարկ վճարող կազմակերպությունները, որոնք նպատակաուղղված են ֆինանսական պլանավորման, իսկ դրա շրջանակներում, հարկային պլանավորման միջոցով, հասնելու ռիսկայնության ցածր գնահատականի: Ամփոփելով նշենք, որ կատարված առաջարկները հնարավորություն են ընձեռում բազմակողմանիորեն և ամբողջությամբ հետազոտելու կազմակերպությունը՝ հարկային ռիսկերի բացահայտման ու գնահատման միջոցով, որոշելու հարկային ռիսկերը նվազագույնի իջեցնելու հանգուցային ուղիությունները:

2. ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՐԿԱԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

2.1. Հարկային բեռի գնահատման մոտեցումները

Մակրոտնտեսական մակարդակով հարկային բեռն ընդհանրացված ցուցանիշ է, որը բնութագրում է հասարակության կյանքում հարկերի դերը՝ հաշվարկվելով որպես հարկերի ընդհանուր գումար/ՀՆԱ հարաբերակցություն: Հարկային բեռն արտացոլում է հասարակության կողմից արտադրված արդյունքի այն մասը, որը պետության գործառույթների ֆինանսավորման և խնդիրների լուծման նպատակով վերաբաշխվում է բյուջետային մեխանիզմների միջոցով:

Մի շարք արևմտյան տնտեսագետներ բնորոշում են հարկային բեռը որպես տնտեսական սահմանափակումների միջոց՝ ձևավորվելով հարկերի վճարման համար միջոցներ և բացառելով դրանք այլ հնարավոր ուղղություններով օգտագործելը: Արտասահմանյան երկրներում այդ ցուցանիշը տատանվում է (Շվեդիայում՝ 52 %, Նեպալում՝ 5 %): Հատկանշական է, որ Եվրոմիության երկրներում մակրոմակարդակով հարկային բեռն էականորեն բարձր է ԱՄՆ-ի և Ճապոնիայի ցուցանիշներից: Օրինակ՝ ՌԴ-ում այդ ցուցանիշը, հաշվի առնելով արտաբյուջետային հիմնադրամների մուտքերը, 2008 թ. կազմել է 34.7%:

Հարկային բեռի գնահատման համար արևմուտքում օգտագործվում է ավելացված արժեքի հարկագանձման ինտեգրալային դրույք-ցուցանիշը (ԱԱՀԻԴ), որի հաշվարկման պարզեցված բանաձևը հետևյալն է.

$$\text{ԱԱՀԻԴ} = (\text{ՆՀ} + \text{ԿՀ} + \text{ՎԱՀ}) / \text{ԱԱ}, \quad (2.1.1),$$

որտեղ՝

- ԱԱ -ն ավելացված արժեքն է՝ արտադրանքի իրացումից հասույթի և նյութական ծախսերի տարբերությունը,
- ԿՀ - կազմակերպության կողմից վճարված հարկերը՝ ներառյալ պարտադիր վճարները,
- ՎԱՀ - ն վարձու աշխատողներից գանձվող հարկերը,
- ՆՀ - ն ներդրողների կամ սեփականատերերի հարկերը:

Արևմտյան փորձը ցույց է տալիս, որ եթե ԱԱՀԻԴ-ն գերազանցում է 40 %-ը (այսպես կոչված՝ Լաֆերի շեմը), ապա արտադրության մեջ ներդրումները դառնում են աննպատակահարմար:

Մեկ այլ մակրոտնտեսական ցուցանիշ է համարվում հարկերի էլաստիկության գործակիցը, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու տնտեսության մեջ հարկագանձման մակարդակը որոշիչ մակրոտնտեսական գործոնների տեսանկյունից: Այն օգտագործվում է ազգային արդյունքի, բնակչության եկամուտների և մանրածախ գների ազդեցությամբ հարկային մուտքերի փոփոխությունը բնութագրելու նպատակով և համարվում է հարկային կարգավորման արդյունավետության ցուցանիշ: Հարկերի էլաստիկության գործակիցը որոշվում է հետևյալ կերպ.

$$\text{ԳՀԷ} = (\text{ՀՄՕ} / \text{ՀՄ}) * (\text{ՈԳ} / \text{ՈԳՕ}), \quad (2.1.2)$$


որտեղ՝

- ԳՀԷ -ն հարկերի էլաստիկության գործակիցն է,
- ՀՄ-ն հարկային ստացումների սկզբնական մեծությունն է,
- ՀՄՕ-ն հարկային մուտքերի հավելաճն է,
- ՈԳ-ն որոշիչ գործոնի սկզբնական մեծությունն է,
- ՈԳՕ-ն վերլուծվող գործոնի հավելաճն է:

Հարկերի էլաստիկության գործակիցը ցույց է տալիս, թե որքանով են փոփոխվել հարկային եկամուտները որոշիչ գործոնի 1 % փոփոխության դեպքում:

Գերմանիայում հարկերի էլաստիկության գործակիցը գրեթե երկու տասնամյակ հավասար է եղել մեկի, ինչը նշանակում է, որ ՀՆԱ-ում պետության հարկային մուտքերի բաժինը մնացել է կայուն: Եթե հարկերի էլաստիկության գործակիցը մեծ է մեկից, ապա հարկային մուտքերն աճում են ավելի մեծ տեմպով, քան ՀՆԱ-ն, և հետևաբար, հարկային եկամուտների բաժինը ՀՆԱ-ում աճում, և՛ հակառակը (2.1.1 գծապատկեր):

Գծապատկերից երևում է, որ 2002 թ., 2004-2011 թթ. ընթացքում էլաստիկության գործակիցը ՀՀ-ում եղել է մեկից մեծ, ինչը նշանակում է, որ հարկային եկամուտները ՀՆԱ-ի ա-ի տեմպի նկատմամբ ունեցել են առաջանցիկ տեմպ: 2001 թ. և 2003թ. էլաստիկության գործակցի արժեքը եղել է մեկից փոքր, ինչը նշանակում է՝ ՀՀ-ում հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում նվազել է:



Գծապատկեր 2.1.1. Հարկերի էլաստիկության գործակցի վարքագիծը ՀՀ-ում

Արևմտյան որոշ զարգացած երկրներում հարկային բեռի որոշման համար օգտագործվում է արդյունավետ հարկային դրույք (ԱՀԴ) ցուցանիշը, որը ներկայացնում է հարկատուի համախառն եկամուտներում հարկերի բաժինը: Այս ցուցանիշը ևս բնութագրում է ընդհանուր հարկային բեռը ներդրումների նպատակահարմարության տեսանկյունից: Ըստ արևմտյան ստանդարտների՝ ԱՀԴ-ի սահմանային մակարդակը կազմում է 35.4 % (այսպես կոչված՝ «հարկային թակարդ»): Դրանից ավելիի դեպքում արտադրության մեջ ներդրումները նպատակահարմար չեն:

Հարկային բեռը տնտեսավարող սուբյեկտների մակարդակով կարող է բնութագրվել որպես եկամուտների բաժին, որ վճարվում են պետությանը հարկերի և հարկային բնույթի վճարումների ձևով: Հարկային բեռի գործակիցը, որպես կանոն, ունենում է հետևյալ տեսքը.

$$ՀԲ = (ՎՀԳ/ՀՎԱԳ) * 100\%, (2.1.3)$$

որտեղ՝

ՀԲ – ն հարկային բեռն է տոկոսային արտահայտությամբ,

ՎՀԳ – ն վճարված հարկերի գումարը,

ՀՎԱԳ – ն հարկերի վճարման միջոցների աղբյուրների գումարը:

Սույն հետազոտության շրջանակներում կարևորագույն խնդիրներից ենք համարել ճյուղային կտրվածքով հարկային բեռի մակարդակի համեմատական վերլուծության խնդրի պարզաբանումը: Քանի որ վերլուծվող ճյուղերը բնութագրվում են տարբեր արտադրական և

տնտեսական հատկանիշներով, ուստի նպատակահարմար է մշակել և կիրառել ավելի ընդհանուր մեթոդաբանություն, որը հնարավորություն կընձեռի իրականացնելու տնտեսության ցանկացած ոլորտի կազմակերպությունների, մենաշնորհային դիրքի և արտադրության արդյունավետության վերլուծություն: Նման մեթոդաբանության մշակման համար, նախևառաջ, էական դեր ունեն կազմակերպության հարկային բեռի հաշվարկման հիմնական մեթոդների դասակարգումն ու վերլուծությունը:

Աղյուսակ 2.1.1

Կազմակերպության հարկային բեռի գնահատման հիմնական մեթոդների դասակարգումն ու վերլուծությունը

Հեղինակ	Հարկերի հաշվարկում ներառվող հարկատեսակների կազմ	Համեմատման բազա	Հարկային բեռի հաշվարկման բանաձև
Ե.Բալացկի	Բոլոր հարկերը	Իրացումից հասույթը	ՎՀԳ/ԻՀ
Մ.Կրեյնինա	Բոլոր հարկերը՝ բացառությամբ ԱԱՀ-ի և ակցիզահարկի	Կազմակերպության շահույթը	$(ԻՀ - Ծ - ՓՇ) / (ԻՀ - Ծ)$
Ա.Բոբրովա	Բոլոր հարկերը՝ բացառությամբ ՖԱԵՀԳ-ից	Կազմակերպության շահույթը չհարկելու դեպքում	$(ՎՀԳ - ՎՀԳ_{\text{ՖԱԵՀԳ}}) / (\Phi\mathcal{C} + ՎՀԳ - ՎՀԳ_{\text{ՖԱԵՀԳ}})$
Անցումային փուլի հիմնախնդիրների տնտեսագիտության ինստիտուտ	Բոլոր հարկերը	Ավելացված արժեքը	ՎՀԳ/ԱԱ
Ն.Կոչետով	Բոլոր վճարված հարկերը	Կազմակերպության գուտ դրամական հոսքերը	ՎՀԳ/ԶԴՀ
Ե.Կիրովա	Բոլոր հարկերը	Նոր ստեղծված արժեքը	$(ՎՀԳ - ՎՀԳ_{\text{ՖԱԵՀԳ}}) / (ՆԱԱ + ԱՇ)$
Մ.Լիթվին	Բոլոր հարկերը	Ավելացված արժեքը	ՎՀԳ/ԱԱ

Ըստ աղյուսակի՝

ՎՀԳ - ն վճարված հարկերի գումարն է,

ԻՀ - ն իրացումից հասույթն է,

Ծ-ն իրացվող արտադրանքի արտադրության ծախսերն են,

ՓՇ -ն կազմակերպության փաստացի շահույթն է,
 ՎԿԳՖԱԵՀԳ-ն ֆիզիկական անձանց եկամուտներից հարկերի
 գումարն է,
 ԱԱ -ն կազմակերպության ավելացված արժեքն է,
 ՆՍԱ -ն նոր ստեղծված արժեքն է (ավելացված արժեքից հանած
 ամորտիզացիա),
 ԱՇ-ն արտաիրացումային շահույթն է,
 ՖԳԶԴԿ- ն՝ կազմակերպության զուտ դրամական հոսքերը:

2.1.1 աղյուսակում արտացոլված մեթոդներից որոշների գործ-
 նական կիրառությունը ՀՀ արտադրական կազմակերպություն-
 ների համար տրված է 2.1.2 աղյուսակում:

Ըստ 2.1.2 աղյուսակի տվյալների՝ կարող ենք կատարել հետևու-
 թյուններ. մասնավորապես՝ Ե. Բալացկու մեթոդով հարկային բեռի
 ամենաբարձր գնահատական ստացվել է Արաքս ԲԲԸ-ի համար՝
 1.412, իսկ ամենացածր՝ Մաքուր երկաթի գործարան ԲԲԸ-ի հա-
 մար՝ 0.017: Գրեթե նույն համամասնություններն են պահպանվել
 նաև Անցումային փուլի հիմնախնդիրների տնտեսագիտության
 ինստիտուտի և Մ. Լիտվինի առաջարկած մեթոդի դեպքում: Ինչ
 վերաբերում է Ն. Կոչետովի առաջարկած մեթոդին, ապա մյուս եր-
 կուսի համեմատ նկատում ենք որոշակի անհամապատասխա-
 նություններ, ինչով վերջինիս կիրառական նշանակությունը մեր
 կողմից չի կարևորվում:

Քննարկվող մեթոդները կարող ենք դասակարգել ինչպես ըստ
 հաշվարկներում ներառվող հարկերի կազմի, հարկային գումար-
 ների համեմատման համար ինտեգրալային բազայի, այնպես էլ
 հարկերի վճարվող գումարների հաշվարկման բանաձևերի: Հար-
 կային բեռի գործակցի հաշվարկում ներառվող մեծությունները կա-
 րող են որոշվել տարբեր կերպ: Մի կողմից՝ դրանք կարելի է հաշ-
 վարկել դրամական հոսքերի հիման վրա. համարիչը փաստացի
 վճարված հարկերի գումարն է, իսկ հայտարարը՝ գնորդներից
 փաստացի ստացած վճարները (հասույթին համարժեք) կամ այն
 վճարները, որոնք պակասեցվում են վճարված նյութական ծախ-
 սերի մեծությամբ (ԱԱՀ-ին համարժեք): Մյուս կողմից՝ բոլոր գոր-
 ծակիցները կարող են հաշվարկվել հարկերի փոխանցված կամ
 դուրս գրված ծախսերի, նյութական և այլ ծախսերի գումարների,
 ինչպես նաև հաշվառմամբ փաստացի ճանաչված հասույթի հիման

վրա: Այս տեսանկյունից, Ե. Կիրովայի և Ն. Կոչետովայի առաջար-
 կած բանաձևերը համարվում են նշվածին համարժեք:

Աղյուսակ 2.1.2

**Կազմակերպության հարկային բեռի գնահատման հիմնական
 մեթոդների կիրառման առանձնահատկությունները ՀՀ արտադրական
 կազմակերպություններում²**

Հեղինակ	Համեմատման բազա	Հարկային բեռի հաշ- վարկման բանաձև	Ամսադ ԲԲԸ	Մաքուր երկաթի գործարան ԲԲԸ	Շեն կոնցեռն ՓԲԸ	Վալկեթա ՍՊԸ	Երևանի շառկայի գինիների գործարան ԲԲԸ	Արաքս ԲԲԸ
Ե.Բալացկի	իրացումից հասույթը	ՎԿԳ/ԻԿ	0.365	0.017	0.149	0.133	0.216	1.412
Անցումային փուլի հիմնա- խնդիրների տնտեսագի- տության ինս- տիտուտ և Մ.Լիտվինի մոտեցում	Ավելացված արժեքը	ՎԿԳ/ԱԱ	0.591	-1.787	1.058	0.206	0.994	2.677
Ն.Կոչետով	Կազմակեր- պության զուտ դրա- մական հոսքերը	ՎԿԳ/ԶԴԿ	-118.22	1.395	15.472	1.008	-4.1	-2.495

Որպես հիմնական մեթոդներին փոխլրացնող՝ կարող են ըն-
 դունվել նաև հետևյալները.

Ըստ Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարու-
 թյան կողմից կիրառվող մեթոդաբանության՝ հարկային բեռի հաշ-
 վարկը կատարվում է հետևյալ կերպ.

$$ՀԲ = (ՎԿԳ / (ԻԿ + ԱԱ + Հ + ԱԵ)) * 100\%, \quad (2.1.4)$$

² Հաշվարկների կատարման համար օգտագործվել են հետազոտված կազմակեր-
 պությունների 2011 թ. ֆինանսական հաշվետվություններից վերցված համապա-
 տասխան տվյալները:

որտեղ՝

ՀԲ- ն կազմակերպության հարկային բեռն է,
 ՎՀ -ն բոլոր վճարված հարկերի գումարն է,
 ԻՀ-ն արտադրանքի իրացումից, ծառայությունների մատուցումից
 հասույթն է,
 ԱԱՀ-ն հաշվանցման ենթակա ԱԱՀ-ն է,
 ԱԵ-ն արտաիրացումային եկամուտներն են:

- Ե.Ա. Կիրովայի առաջարկած մեթոդի համաձայն՝ հարկային բեռը տրոհվում է բացարձակի և հարաբերականի: Բացարձակ հարկային բեռը կազմակերպության վճարած հարկերի և պարտադիր վճարների հանրագումարն է և հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$ԲՀԲ = \frac{ՎՀ}{Գ + ԱՀ + ՎԱ}, \quad (2.1.5)$$

որտեղ՝

ԲՀԲ-ն բացարձակ հարկային բեռն է,
 ՎՀԳ-ն կազմակերպության կողմից վճարված հարկերի գումարն է,
 ԱՀՎ-ն արտաբյուջետային հիմնադրամներ կատարվող վճարումներն են,
 ՎԱ-ն վճարումների անճշտություններն են:

- Արտադրանքի նոր ստեղծված արժեքը որոշվում է հետևյալ կերպ.

$$ՆՍԱ = ՀՀ - ՆԾ - Ա + ԱԵ - ԱԾ, \quad (2.1.6)$$

որտեղ՝

ՆՍԱ-ն նոր ստեղծված արժեքն է,
 ՀՀ-ն արտադրանքի իրացումից, ծառայությունների մատուցումից հասույթն է՝ ներառյալ ԱԱՀ-ն,
 ՆԾ-ն նյութական ծախսերն են,
 Ա-ն ամորտիզացիան է,
 ԱԵ -ն արտաիրացումային եկամուտներն են,
 ԱԾ -ն արտաիրացումային ծախսերն են:

Հարաբերական հարկային բեռն, ըստ Ե.Ա. Կիրովայի, հաշվարկվում է որպես բացարձակ հարկային բեռի և նոր ստեղծված արժեքի հարաբերություն:

2.1.3 աղյուսակում ներկայացրել ենք Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության կողմից կիրառվող և Ե.Ա. Կիրովայի առաջարկած մեթոդների կիրառական կազմակերպությունների համար:

Աղյուսակ 2.1.3

Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության կողմից կիրառվող և Ե. Ա. Կիրովայի առաջարկած մեթոդների կիրառական նշանակությունը ՀՀ արտադրական կազմակերպություններում³

Մոտեցում	Այլսառ ԲԲԸ	Մաքուր երկաթի գործարան ԲԲԸ	Շեն կոնցեռն ՓԲԸ	Վալլետա ՍՊԸ	Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ	Արաքս ԲԲԸ
Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության կողմից կիրառվող մեթոդաբանությունը (%)	26,57	1,365	13,78	4,837	21,6	118,28
Ե. Ա. Կիրովայի առաջարկած մեթոդը բացարձակ (հազ. դրամ), (1) ՆՍԱ (2) հարաբերական ((1/2)*100%)	32394	528612	613526	180096	315889	20329
	39871	3151085	353816	496159	239975	8309
	81.24	16.77	173.4	36.29	131,63	244.66

Ըստ 2.1.3 աղյուսակի հաշվարկների՝ Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության կողմից կիրառվող մեթոդով հարկային բարձր բեռ է արձանագրվել Արաքս ԲԲԸ-ում՝ 118.28 %: Այս առումով, ամենանպաստավոր վիճակը Մաքուր երկաթի գործարան ԲԲԸ-ում է՝ 1.365 %: Համաձայն Ե.Ա.Կիրովայի հարաբերական գնահատման մեթոդի՝ լավ վիճակում է գտնվում Մաքուր երկաթի գործարան ԲԲԸ-ն, այնուհետև Վալլետա ՍՊԸ-ն և Այմաստ ԲԲԸ-ն: Այս մեթոդով հարկային հարաբերական բեռի ամենաբարձր արժեքն արձանագրվել է Արաքս ԲԲԸ-ում: Այս փուլում կատարված հետազոտությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ

³ Հաշվարկների կատարման համար օգտագործվել են հետազոտված կազմակերպությունների 2011 թ. ֆինանսական հաշվետվություններից վերցված համապատասխան տվյալները:

ՀՀ գյուղատնտեսական ոլորտի արտադրական կազմակերպությունների համար կիրառվող մեթոդներով հաշվարկված հարկային բեռը բավական բարձր է, և այս ոլորտում առկա է հարկային բեռի օպտիմալացման խնդիր:

Մասնագիտական գրականության մեջ գոյություն չունի միասնական տեսակետ հարկերի և վճարների այն կազմի առումով, որոնք անհրաժեշտ է ներառել հարկային բեռի հաշվարկում: Առավել վիճահարույց են այն հարցերը, որոնք կապված են կազմակերպության հարկային գործակալի դերում հանդես գալու հանգամանքի հետ (վարձու աշխատողների համար՝ եկամտային հարկը): Ֆիզիկական անձանց եկամուտներից հարկերը փոխանցվում են բյուջե հարկային գործակալ հանդիսացող կազմակերպությունների կողմից, սակայն տվյալ հարկերի գծով հարկատու են համարվում վարձու աշխատողները: Նշվածի հիման վրա մի շարք հետազոտողներ՝ Ա. Բոբրովան, Ե. Կիրովան, բացառում են հարկային բեռի հաշվարկում ֆիզիկական անձանց եկամուտների դիմաց գանձվող ուղղակի հարկերի ներառումը: Այլ հետազոտողներ՝ Մ. Լիթվինը, Ն. Կոչետովը, ընդհակառակը, կարծում են, որ ֆիզիկական անձանց եկամուտների դիմաց գանձվող ուղղակի հարկերը պետք է ներառվեն կազմակերպության հարկային բեռի հաշվարկներում, քանի որ դրանք, ի վերջո, վճարում է կազմակերպությունը և, ինչպես ԱԱՀ-ի դեպքում, շրջանառությունից դուրս է բերում դրամական միջոցներ: Մեր կարծիքով՝ նման մոտեցումն իրատեսական կարող է լինել, եթե կազմակերպության հարկային բեռի հաշվարկը հիմնվի դրամական հոսքերի տվյալների վրա:

Կազմակերպության հարկային բեռի հաշվարկման մեթոդները միմյանցից տարբերվում են նաև համեմատման բազայով: Ըստ 2.1.1 աղյուսակի մեթոդների՝ հաշվարկման բանաձևում հայտարարի դերում հանդես են գալիս իրացումից հասույթը, ավելացված արժեքը, նոր ստեղծված արժեքը՝ ավելացված արժեք հանած ամորտիզացիա, արտաիրացումային շահույթը, կազմակերպության շահույթը, ինչպես նաև շահույթի և հարկային վճարումների գումարը:

Հարկային գումարները հարկային բեռի հաշվարկման ժամանակ պետք է համապատասխանեն դրանց վճարման աղբյուրին:

Մեր կարծիքով՝ առավել իրատեսական է կազմակերպության ավելացված արժեքի օգտագործումը, որը համարվում է վերջինիս զարգացման աղբյուր:

Հարկային բեռի գնահատման նպատակով առաջարկում ենք օգտագործել նաև հետևյալ գործակիցը.

$$K = \{P<9 - <9\Phi - <9\Phi + <9\Phi * \epsilon / (U\epsilon + \Gamma\epsilon)\} / (C - \text{ՆԾ} - A) \quad (2.1.11)$$

որտեղ՝

- P<9 - ն բոլոր հարկերի գումարն է,
- <9Φ- ն ֆիզիկական անձանց եկամուտներից գանձվող հարկերի գումարն է
- <9Φ- ն ուղղակի հարկերի գումարն է,
- ΓԷ- ն ապրանքի առաջարկի էլաստիկությունն է ըստ գնի,
- UԷ - ն ապրանքի առաջարկի էլաստիկությունն է ըստ գնի,
- Հ- ն հասույթն է,
- ՆԾ- ն նյութական ծախսերն են,
- A- ն ամորտիզացիան է:

Մ. Կրեյնինան իր առաջարկած տեսակետում ներառում է բոլոր հարկերը, բացառությամբ՝ ուղղակի հարկերի, քանի որ վերջիններս դրանց վճարման դեպքում կլանում են կազմակերպության դրամական միջոցները:

Ա. Բոբրովան, Մ. Լիթվինը և Ե. Կիրովան, ընդհակառակը, կարծում են, որ ուղղակի հարկերն ամբողջությամբ պետք է ներառվեն հարկային բեռի հաշվարկում, քանի որ դրանք գնորդների համար հեշտ մատուցվող են՝ ապրանքի գնի մեջ ուղղակիորեն ներառելու ուղով:

Ներկայացված մոտեցումներն ունեն կիրառական կարևոր նշանակություն և օժանդակում են կազմակերպությունների ֆինանսական կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

2.2. Կազմակերպության հարկազանձման օպտիմալացման առաջարկվող մոտեցումը

Փոքր և միջին կազմակերպություններն են միկրոմակարդակում առավելապես կրում հարկային բեռը, ուստի հարկազանձման օպտիմալացման կիրառումը, մեր կարծիքով, տնտեսավարող սուբյեկտի մենեջերներին կազմակերպության հարկազանձման համակարգի հաշվառման, վերլուծության, վերահսկողության և կարգա-

վորման գործընթացներում հնարավորություն կընձեռի կիրառելու ժամանակակից կառավարչական որոշումներ: Նկատի ունենալով վերոնշյալը՝ մեր կողմից 2.2.1 գծապատկերում առաջարկվել է կազմակերպության հարկազանձման օպտիմալացման օրինակելի տարբերակ:

Հարկազանձման օպտիմալացման առաջարկվող մոտեցման նպատակը կազմակերպության հարկային համակարգի կարգավորումն է, որպեսզի հարկային պլանավորման, վերահսկողության և կարգավորման արարողակարգերի իրացման ընթացքում հարկային բեռի ցուցանիշի նշանակությունը գտնվի «հարկային միջանցքի» սահմաններում:

«Հարկային միջանցք» հասկացությունը մեր կողմից կապվել է կազմակերպության հարկային համակարգի օպտիմալացման նպատակային ֆունկցիայի կառուցման խնդրի լուծման հետ: Խնդրի լուծման շրջանակներում տարանջատվել են «հարկային միջանցքի» ստորին և վերին սահմանները:

«Հարկային միջանցքի» վերին սահմանը հարկային բեռի ցուցանիշի այնպիսի նշանակությունն է, որի դեպքում կազմակերպության գործունեության տնտեսական շահութաբերությունը համադրելի է հարկային բեռի հավելածին, այսինքն՝ կազմակերպությունը պահպանում է կայուն ֆինանսական վիճակ և հետագա զարգացման համար տնօրինում է բավարար ռեսուրսներ:


«Հարկային միջանցքի» վերին սահմանը սովորական հարկային ռեժիմի դեպքում հաշվարկելու համար առաջարկում ենք հետևյալ բանաձևը.

$$I_{1 \text{ սահմ}} = ((\text{ԱԱՀԳ} + (\text{ՋՇ} * K_i / (1 - K_i) + \text{ԵՀԳ})) / \text{ԻՀ}) * 100$$

$$I_1 \geq \overline{I_1}, \text{ պայմանի դեպքում} \quad (2.2.1)$$

որտեղ՝

- $\overline{I_1 \text{ սահմ}}$ - «հարկային միջանցքի» վերին սահմանն է,
- $\overline{I_1}$ - ն միջնուղային հարկային բեռն է,
- ԱԱՀԳ - ն ավելացված արժեքի հարկի գումարն է,
- ՋՇ- ն զուտ շահույթն է,
- K1 ն շահութահարկի դրույքաչափի գործակիցն է,
- ԵՀԳ ն եկամտային հարկի գումարն է,
- ԻՀ - ն իրացումից հասույթն է:



Գծապատկեր 2.2.1. Կազմակերպության հարկազանձման օպտիմալացման օրինակելի տարբերակ

Առաջարկված բանաձևով ՀՀ հետազոտված ենթաճյուղերի համար կատարված հաշվարկները ներկայացվել են ստորև՝ 2.2.1 աղյուսակում.

Աղյուսակ 2.2.1

Միջին կազմակերպությունների «հարկային միջանցքի» վերին սահմանը և վարկի փոկոսադրույքի գծով ձևավորված զամբյուղները (հաշվարկներն ըստ շահութահարկի)

1	2	3	5	6
1	Հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի աճեցում	32,03	11,74	
2	Գյուղատնտեսական թռչունների բուծում	23,20		-16,34
3	Բուսաբուծության բնագավառում ծառայությունների մատուցում	24,92		-32,77
4	Գունավոր մետաղների հանքաքարերի արդյունահանում	23,54		-5,19
5	Շինարարության համար քարերի արդյունահանում	28,60		-222,8
6	Կրաքարի, գիպսի և կավճի արդյունահանում	27,22		-16835,5
7	Աղի արդյունահանում և արտադրություն	31,44		-506,24
8	Ուրիշ խմբավորումներում չներառված հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	40,55	11,02	
9	Ընտանի թռչունների և ճագարի մսի արտադրություն	24,32	12,89	
10	Մսամթերքի արտադրություն	23,43	3,58	
11	Մրգահյութերի և բանջարահյութերի արտադրություն	22,97		-15,15
12	Ուրիշ խմբավորումներում չներառված մրգերի և բանջարեղենի վերամշակում և պահածոյացում	23,63	5,52	

13	Կաթի վերամշակում և պանրի արտադրություն	24,18		-29,49
14	Պաղպաղակի արտադրություն	24,13		-6,26
15	Ալյուրազ արդյունաբերության մթերքի և ձավարեղենի, արտադրություն	24,26		-3,76
16	Հացի և թարմ հրուշակեղենի արտադրություն	23,73		-17,8
17	Պաքսիմատների, թխվածքաբլիթների և երկարատև պահվող հրուշակեղենի արտադրություն	23,35		-9,21
18	Կակաոյի, շոկոլադի և շաքար պարունակող հրուշակեղենի արտադրություն	24,43		-33,51
19	Մակարոնեղենի արտադրություն	24,15		-201,83
20	Սուրճի և թեյի արտադրություն	25,85		-40,34
21	Թորած ակոհոլային խմիչքների արտադրություն	27,10		-8,4
22	Գինու արտադրություն	23,45	2,64	
23	Գարեջրի արտադրություն	24,79	3,08	
24	Ածիկային զարեջրի արտադրություն	24,63		-12,15
25	Հանքային արտադրատեսակների և ոչ ակոհոլային խմիչքների արտադրություն	25,79		-45
26	Ծխախոտի արտադրատեսակների արտադրություն	27,21		-31,94
27	Բամբակե գործվածքների արտադրություն	27,54	12,05	
28	Գորգերի և գորգեղենի արտադրություն	33,44	11,18	
29	Տրիկոտաժե պոլիվերների և համանման արտադրատեսակների արտադրություն	24,27	2,29	
30	Հատուկ հագուստի արտադրություն	25,06		-19,25
31	Վերնահագուստի արտադրություն	23,99	2,51	
32	Ներքնահագուստի արտադրություն	27,61		-11,38
33	Փայտե շինարարական կառուցատարրերի և ատաղձագործական արտադրատեսակների արտադրություն	25,55		-59,46
34	Ծալքավոր ստվարաթղթե, թղթե և ստվարաթղթե փաթեթվածքի արտադրություն	26,61		-25,07
35	Հրատարակչական գործի այլ տեսակներ	25,96		-99,86
36	Ուրիշ խմբավորումներում չներառված պոլիգրաֆիական գործունեություն	24,87	2,65	
37	Կազմարարություն և դրվագում	24,31		-1852,85
38	Տպագրական ձևերի պատրաստում	31,51		-319,55
39	Այլ հիմնական անօրգանական քիմիական նյութերի արտադրություն	36,23	13,38	

40	Ներկերի, լաքերի և համանման ծածկույթների, տպագրական ներկերի, մածիկի արտադրություն	24,29		-12,23
41	Հիմնական դեղանյութերի արտադրություն	27,41		-129,426
42	Դեղերի արտադրություն	27,09		-86,519
43	Օճառի և մաքրող, վլացող, փայլեցնող միջոցների արտադրություն	25,72		-13,85
44	Այլ քիմիական նյութերի արտադրություն	32,20	12,28	
45	Պլաստմասսայե սալերի, խողովակների, շերտածողերի և տրամատների արտադրություն	26,90		-4,93
46	Փաթեթավորման համար պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	24,08	6,95	
47	Այլ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	23,77		-3,28
48	Թերթապակու կաղապարում և մշակում	33,91	15,312	
49	Սնամեջ ապակե արտադրատեսակների արտադրություն	25,62	3,74	
50	Ցեմենտի արտադրություն	24,08		-25,42
51	Կրի արտադրություն	23,33		-59,91
52	Գիպսի արտադրություն	25,53		-114,652
53	Շինարարությունում օգտագործվող բետոնե շինվածքների արտադրություն	25,50		-96,3054
54	Ապրանքային բետոնի արտադրություն	23,62		-7,95
55	Քարի սղոցում, մշակում և դրվագում	24,35	7,31	
56	Ուրիշ խմբավորումներում չներառված այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	26,26	10,58	
57	Թուջի, պողպատի և երկաթամիահալվածքների արտադրություն	24,39	6,55	
58	Մետաղալարի արտադրություն	24,14		-3,67
59	Թանկարժեք մետաղների արտադրություն	24,54	7,31	
60	Պղնձի արտադրություն	25,64		-16,1
61	Այլ գունավոր մետաղների արտադրություն	24,99	15,41	
62	Թուջի ձուլում	25,67	1,8	
63	Պողպատի ձուլում	24,42		-5,01
64	Շինարարական մետաղե կառուցատարրերի արտադրություն	24,59		-1,03
65	Շինարարական մետաղե շինվածքների արտադրություն	24,51		3,22
66	Մեքենաշինության հիմնական տեխնոլոգիական գործընթացներ	25,73		-16,11
67	Գործիքների արտադրություն	29,39	9,42	

68	Այլ պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	30,06		-161,04
69	Շարժիչների և տուրբինների արտադրություն, բացի ավիացիոն, ավտոմոբիլային և մոտոցիկլային շարժիչներից	26,43		-33,65
70	Հաստոցների արտադրություն	25,77		-3,17
71	Հատուկ նշանակման այլ մեքենաների և սարքավորումների արտադրություն	25,76	6	
72	Կենցաղային էլեկտրական սարքերի արտադրություն	35,22	10,92	
73	Էլեկտրաշարժիչների, գեներատորների և տրանսֆորմատորների արտադրություն	25,69		-4,75
74	Էլեկտրաբաշխիչ և կարգավորիչ ապարատների արտադրություն	25,69		-31,94
75	Մեկուսացված հաղորդալարերի և մալուխների արտադրություն	28,82	157,99	
76	Գալվանական տարրերի արտադրություն	50,77	10,79	
77	Էլեկտրական լամպերի և լուսավորման սարքավորանքի արտադրություն	28,07	12,16	
78	Այլ էլեկտրասարքավորանքի արտադրություն, բացի շարժիչների և տրանսպորտային միջոցների համար էլեկտրասարքավորանքից	24,89		-12,76
79	Հաղորդող սարքավորանքի արտադրություն	27,43	9,23	9,23
80	Ձայնի, պատկերի ընդունման, ծայնագրման, տեսագրման և վերարտադրման համար սարքավորանքի արտադրություն	28,64	-5,82	-5,82
81	Հսկիչ-չափիչ սարքերի արտադրություն	35,20	27,07	
82	Արդյունաբերական գործընթացների համար ստուգիչ սարքավորանքի արտադրություն	32,31	15,14	
83	Այլ կահույքի արտադրություն	24,75		-10,9
84	Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	24,55	8,44	
85	Ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրանքի արտադրություն	25,26		-9,27
86	Էլեկտրաէներգիայի արտադրություն և բաշխում	24,10	5,82	
87	Գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	24,46		-4,6
88	Ջրի հավաքում, մաքրում և բաշխում	27,96	18,06	18,06

89	Շենքերի կազմակերպում և քանդում, հողա- յին աշխատանքներ	24,64		-10,6
90	Ընդհանուր շինարարական աշխատանք- ներ	23,75		-12,35
91	Ճանապարհների և սպորտային կա- ռույցների շինարարություն	27,11		-115,851
92	Ջրային կառույցների շինարարություն	26,79		-636,62
93	Այլ շինարարական աշխատանքներ	23,86		-1,47
94	Էլեկտրամոնտաժման աշխատանքներ	26,14		-71,06
95	Սանիտարատեխնիկական աշխատանքներ	27,16		-92,58
96	Այլ ճարտարագիտական սարքավորանքի տեղադրում	28,60		-73,37
97	Հարդարման այլ աշխատանքներ	26,62		-212,42
98	Ավտոմեքենաների առևտուր	24,19		-5,75
99	Ավտոմեքենաների տեխնիկական սպա- սարկում և նորոգում	32,10		-24,14
100	Ավտոմեքենաների մանրակների, հան- գույցների և պարագաների առևտուր	23,99		-14,65
101	Մոտոցիկլների առևտուր, տեխնիկական սպասարկում և նորոգում	26,74		-6,56
102	Շարժիչային վառելիքի մանրածախ առևտուր	25,79	20,31	
103	Սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների առևտ- րով զբաղվող գործակալների գործունեու- թյուն	24,21		-22,65
104	Հացահատիկային մշակաբույսերի, սեր- մերի և անասնակերերի մեծածախ առևտուր	24,94	5,99	
105	Ծխախոտի արտադրատեսակների մեծածախ առևտուր	24,61		-28,65
106	Շաքարի, շոկոլադի և շաքարային հրու- շակեղենի մեծածախ առևտուր	24,91		-99,55
107	Սուրճի, թեյի, կակաոյի և համեմունքների մեծածախ առևտուր	24,77		-0,85
108	Այլ սննդամթերքի մեծածախ առևտուր	27,72		-64,29
109	Սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների ոչ մասնագիտացված մեծածախ առևտուր	27,30		-482,11
110	Կենցաղային էլեկտրական ապրանքների, նադիր- և հեռուստաապարատուրայի մե- ծածախ առևտուր	24,69		-35,65

111	Օծանելիքի և գեղարարական ապրանք- ների մեծածախ առևտուր	25,55		-319,04
112	Դեղագործական ապրանքների մեծածախ առևտուր	25,66		-18,72
113	Սպառողական նշանակման ոչ մթերային այլ ապրանքների մեծածախ առևտուր	24,97		-67,86
114	Վառելիքի մեծածախ առևտուր	23,40	1,73	
115	Անտառանյութերի, շինանյութերի և սա- նիտարատեխնիկական սարքավորանքի մեծածախ առևտուր	24,75		-6,41
116	Երկաթեղենի, ջրմուղի և ջեռուցման սարքավորանքի մեծածախ առևտուր	24,85	1,93	
117	Քիմիական արտադրանքի մեծածախ առևտուր	23,57	6,56	
118	Թափոնների և ջարդոնի մեծածախ առևտուր	24,21		-8,22
119	Շինարարության համար սարքավորանքի մեծածախ առևտուր	23,73		-5,57
120	Գրասենյակային մեքենաների և սարքա- վորանքի մեծածախ առևտուր	24,43		-0,49
121	Այլ սարքավորումների և մեքենաների մեծածախ առևտուր	23,90		-7,54
122	Գյուղատնտեսական մեքենաների մեծա- ծախ առևտուր	29,25	14,85	
123	Այլ մեծածախ առևտուր	23,76		-5,2
124	Ոչ մասնագիտացված խանութներում առավելապես սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների և ծխախոտի արտադրատե- սակների մանրածախ առևտուր	23,61		-10,62
125	Ոչ մասնագիտացված խանութներում այլ մանրածախ առևտուր	24,27		-15,57
126	Ալկահոլային և այլ խմիչքների մանրածախ առևտուր	25,39		-24,43
127	Ծխախոտի արտադրատեսակների ման- րածախ առևտուր	24,94		-24,13
128	Մասնագիտացված խանութներում այլ սննդամթերքի մանրածախ առևտուր	23,88		-22,63
129	Դեղագործական ապրանքների մանրա- ծախ առևտուր	24,22		-24,78
130	Բժշկական և օրթոպեդիկ ապրանքների մանրածախ առևտուր	25,82		-47,18
131	Օծանելիքի և գեղարարական ապրանք- ների մեծածախ առևտուր	24,03		-15,11
132	Մանածագործական արտադրատեսակ- ների մանրածախ առևտուր	26,44		-13,93

133	Հագուստի մանրածախ առևտուր	24,25		-17,33
134	Կոշիկեղենի և կաշվե արտադրատեսակների մանրածախ առևտուր	25,01		-4,57
135	Կահույքի և տան համար ապրանքների մանրածախ առևտուր	26,84		-10,08
136	Կենցաղային էլեկտրական ապրանքների, ռադիո- և հեռուստաապարատուրայի մեծածախ առևտուր	24,85		-49,24
137	Երկաթեղենի, լաբերի, ներկերի և ապակու մանրածախ առևտուր	24,55	6,16	
138	Գրքերի, թերթերի, գրենական պիտույքների մանրածախ առևտուր	26,29		-26,89
139	Մասնագիտացված խանութներում այլ մանրածախ առևտուր	23,75		-11,5
